

ՍՈՒՐԻԱ ԿԸ ՀԵՐՔԷ ԵՐԿՐԷՆ ՆԵՐՍ ԱՄՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐՈՒ ԱՌԵԿԱՆՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՄՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի, 17 Օգոստոս 2022-ին, Սուրիոյ Արտաքին գործոց Նախարարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ մը, հերքելով ԱՄՆ գերատեսչութեան այն յայտարարութիւնները, ըստ որոնց սուրիական բանակին հսկողութեան տակ գտնուող շրջաններու մէջ Սուրիոյ կառավարութիւնը ամերիկացի քաղաքացիներ առեւանգած է, որոնց կարգին ԱՄՆ բանակի զինուոր Օսթըն Թայս, որ տարիներ առաջ, ԱՄՆ-ի պաշտօնական աղբիւրներուն համաձայն, Սուրիա մտած էր ապօրինի միջոցներով:



Նախարարութիւնը ակնարկով. «Սուրիոյ Հանրապետութիւնը կը հերքէ նման յայտարարութիւններ եւ ԱՄՆ-ի հանրային կարծիքին ուշադրութիւնը կ'ուզէ հրաւիրել այն իրողութեան վրայ, որ ԱՄՆ խախտած է Վիեննայի հիւպատոսական եւ դիւանագիտական յարաբերութիւններու համաձայնութեան յօդուածները՝ երբ ամերիկացի քաղաքացիները քաջալերեց Սուրիա մտնել ապօրինի միջոցներով, առանց սուրիական կառավարութեան արտօնութեան, որպէսզի անոնք հասնին զինեալ ահաբեկչական խմբաւորումներու բռնազրաւած շրջաններ»:

Նախարարութիւնը եզրափակելով շեշտեց, որ ԱՄՆ պետք է անմիջապէս դուրս հանէ իր ապօրինի ուժերը սուրիական հողերէն, դադարի սուրիական քարիւղային եւ գիւղատնտեսական հարստութիւնները թալանելէ, ինչպէս նաեւ վերջ տայ Սուրիոյ ժողովուրդին դէմ բանեցուած տնտեսական պատժամիջոցներու ճնշումին:

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՂԱՏԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՎԸ ԸՆԴՈՒՆԱԾ Է 57354 ԹԵԿՆԱԺՈՒԹԵԱՆ ԴԻՄՈՒՄ ԵՒ ՄԵՐԺԱԾ՝ 10824 ԴԻՄՈՒՄ

Ընտրութիւններու բարձրագոյն դատական յանձնաժողովի ղեկավար, դատաւոր խորհրդական Ճիհատ Մուրատ յայտարարեց, որ դատաւորներու առաջադրման յանձնախումբերը աւարտած են իրենց աշխատանքը Սուրիոյ բոլոր նահանգներուն մէջ եւ տեղական ինքնակառավարման մարմիններու ընտրութիւններուն համար առաջադրուած բոլոր դիմումները սերտած են: Ընտրութիւնները տեղի պիտի ունենան 18 Սեպտեմբերին:



Ընդունուած է 57354 դիմում, մերժուած՝ 10824: Իւրաքանչիւր նահանգի մէջ յայտարարուած է թեկնածուներուն անունները:

ԵՐԵՒԱՆԻ «ՍՈՒՐՄԱՆՈՒ» ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿԵԳՐՈՆԷՆ ՆԵՐՍ ՊԱՅԹՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱՒ

Հայաստանի Արտակարգ Իրավիճակներու Նախարարութիւնը (այսուհետեւ՝ ԱԻՆ) տեղեկացուց, որ 14 Օգոստոսին, Երեւանի ժամով 13:23ին, «Սուրմալու» առետրական կեղոնէն ներս պայթում տեղի ունեցած է:



Պայթումին հետեւանքով գոհուած է 16 մարդ, 2 քաղաքացի անհետ կորած է: Որոնողափրկարարական աշխատանքները կը շարունակուին: Հայաստանի մէջ 17 եւ 18 Օգոստոսը կառավարութեան կողմէ պաշտօնապէս սուգի օրեր յայտարարուեցան:

ՈՒՍՏԱԽՈՐՆԵՐՈՒ ՄԵՏԱԹԻ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ՝ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳՈՎ, ԶՐՕՐՀՆԷՔՈՎ, ԽՍՂՈՂՕՐՀՆԷՔՈՎ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԱԲՆԱԿԱՆ ՏՈՂԱՆՃՔՈՎ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՅԱՒ Ս. ԱՍՏՈՒԱՍԾԻՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՏՕՆԸ ՔԵՍԱՊԻ ՄԷՉ

Բերիոյ Հայոց Թեմի բոլոր շրջաններէն ներս, Կիրակի, 14 Օգոստոս 2022-ին, հանդիսաւոր Սուրբ եւ Անմահ Պատարագով յիշատակուեցաւ Ս. Աստուածածինի Վերափոխման տօնը, որ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ



հինգ տաղաւար տօներէն չորրորդն է եւ կը յիշատակուի 15 Օգոստոսի մօտակայ Կիրակի օրը:

Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան, Ս. Աստուածածինի Վերափոխման տօնին առիթով եպիսկոպոսական Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց, իր հայրական պատգամը փոխանցեց, նորոհնեալ Միւռնոսով Զրօրհնեք, ապա նաեւ խաղողօրհնեք

Մարինա Չիլաբօջեան-Պողկեան
 Շաբ. 19 12

ՔԵՍԱՊԻ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՌՍՏՕՆԸ ՀԱՆԴԻՍԱԽՈՐ ՀՈՒՔՈՎ ՅԻՇԱՏԱԿՈՒԵՅԱՒ



Հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Սուրիոյ զբօսաշրջութեան նախարար Ռամի Ռատուան Մարթինիի, օրհնութեամբ եւ ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տր Մասիս Սրբ.

Եպս. Չօպուեանի, գործակցութեամբ Լաթաքիոյ զբօսաշրջութեան տնօրէնութեան եւ Զեսապի գիւղապետութեան, Շաբաթ, 13 Օգոստոս 2022-ի միջօրէին, հանդիսաւոր շուքով բացումը կատարուեցաւ Զեսապի տարեկան փառատօնին, որուն



մասնակցեցան Համազգայինի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի Ետդրատային Նուագախումբն ու մեներգողները, «Սարդարապատ» պարախումբը, Լաթաքիոյ «Վ. Նաւասարդեան» Մասնաճիւղի «Գեղարդ» պարախումբը, ՀՄԸՄ-ի փողերախումբը եւ ՍՕ Խաչը:

Խմբագրական

ԹՈՒՐԵՒՅ ԱՐՏԱՔԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՇՐՋԱԴԱՐՁ

Սուրիոյ տագնապի սկիզբէն Թուրքիան ամէն ջանք ի գործ դրաւ տապալելու Սուրիոյ իշխանութիւնը եւ ապահովական գոտիներ հաստատելու պատրուակով Սուրիա թափանցելու:

11 տարիներ վերջ, սակայն, Թուրքիոյ ընդդիմութեան եւ քաղաքական տարբեր ուժերու կարծիքով, Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան գլխաւոր թերութիւններէն մէկը համարուեցաւ Սուրիոյ տագնապին մէջ երկրի իշխող ուժին խրուիլն ու Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու հիմնովին տապալումը:

Այսօր, 11 տարի վերջ, երբ Թուրքիոյ տնտեսութիւնը անկումի շրջան կ'ապրի, երբ սուրիացի գաղթականներու հարցը գործեան հանգոյցի նման կը սեղմէ Թուրքիոյ իշխող ուժին կոկորդը, Թուրքիա Սուրիոյ պետութեան հետ երկխօսութեան հաւանականութեան հարցը կ'արծարծէ տեղեկատուական դաշտին մէջ:

Սուրիական եւ թրքական լրատուագաշտին մէջ շրջանառուած տեղեկութիւններուն համաձայն, Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը, այլ ժողովի մը առիթով, Սուրիոյ արտաքին գործոց նախարարին հետ կարճ գրոյցի մը ընթացքին հաստատած է Սուրիոյ տարածքային ամբողջականութեան պահպանման, Սուրիոյ իշխանութեան եւ զինեալ ընդդիմութեան երկխօսութեան, ինչպէս նաեւ Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու վերականգնումին անհրաժեշտութիւնը:

Իրականութեան մէջ, Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան այս շրջադարձը եթէ մէկ կողմէ ռուս-իրանական յորդորին վրայ կը յենի, միւս կողմէ, նախագահական ընտրութիւններու սեմին, Թուրքիոյ ընդդիմութեան խաղաքարտերու տապալման համար կատարուած փորձ մըն է, որ յաջողութեան հասնելու համար սակայն գործնական քայլերու կը կարօտի: Վերջին շրջանին Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը կ'ուղղուի դրացի երկիրներուն հետ (Ներառեալ՝ Յայաստանի) տարիներու ընթացքին քայքայուած ու գեռո մակարդակի հասած յարաբերութիւններու աստիճանական բարելաւման:

Թուրքիոյ ընդդիմութիւնը կը շեշտէ, որ սուրիական տագնապին միջամուխ ըլլալով, Թուրքիա չկրցաւ քրտական գործօնին ազդեցութիւնը նուազեցնել, միւս կողմէ մինչեւ օրս մեծ գումարներ կը յատկացնէ Սուրիոյ մէջ իր զինուորական ներկայութիւնը պահելու եւ զինեալները մատակարարելու համար, ինչ որ Թուրքիոյ տնտեսութեան վրայ բացասական ազդեցութիւն կը շարունակէ ունենալ:

Միւս կողմէ, սուրիացի գաղթականներուն հարցը կը շարունակէ մնալ անլուծ, իսկ Թուրքիան այսուհետ, գաղթականներու հարցով սպառնալով եւրոպական երկիրներու, ոչ մէկ ներդրում կրնայ ստանալ: Եւրոպան ու ողջ աշխարհը այսօր խրուած է ուքրանական պատերազմին հետեւնեքով յառաջացած տնտեսական ու աշխարհաքաղաքական հարցերու մէջ:

Թուրքիոյ ընդդիմութիւնը ի նպաստ կ'արտայայտուի Սուրիոյ հետ յարաբերութիւններու բարելաւման, հետեւաբար, Թուրքիոյ իշխող ուժը ընդդիմութեան այս խաղաքարտը խլելու համար կը փորձէ Սուրիոյ հետ մերձեցման եզրեր գտնել Ռուսիոյ օժանդակութեամբ:

Սուրիական կողմը թէեւ ցարդ պաշտօնական ոչ մէկ անդրադարձ ունեցաւ թրքական կողմի մերձեցման ձեւական քայլերուն, սակայն սուրիացի քաղաքագետներ կը շեշտեն, որ Սուրիոյ կառավարութիւնը նման հարցերու լուծման զգացական դիտանկիւնէ չի մօտենար: Սուրիոյ նախագահին եւ արտաքին գործոց նախարարին վերջին տարիներու պատգամները յստակ էին. Սուրիա ներխուժած ուժերու հետ կարելի չէ բանակցիլ, նախ հարկ է որ անոնք դուրս գան սուրիական տարածքներէն ու յարգեն Սուրիոյ ինքնիշխանութիւնը, ըստ այնմ, Սուրիան երկրի ու ժողովուրդի շահերէն մեկնելով, պատրաստակամ կը դառնայ գործակցելու բոլորին հետ:

Երկ Թուրքիա կրկին հրթիռակոծեց սուրիական զինուորական կեդրոններ, հաւանաբար մեղմացնելու Սուրիոյ զինեալ խմբաւորումներու գայրոյթը գիրենք անտէր թողելու Թուրքիոյ շրջուող քաղաքականութենէն, միւս կողմէ սուրիական կողմէն եւս մերձեցման տրամադրութիւն չօժակելու ակընկալութեամբ:

Վերջապէս Թուրքիոյ նախագահ Էրտողանի արտաքին քաղաքականութեան մէջ ունեցած այս շրջադարձը կարելի է թարգմանել Սուրիոյ դէմ պատերազմը շարունակելու հեռանկարի բացակայութեամբ, փոխարէնը որոնելու երկու երկիրներու տնտեսական շահերու մերձեցման կետեր եւ Սուրիոյ ներքին հարցերուն միջամտութենէն ձերբազատելու միջոցներ:

Թուրքիան Սուրիոյ պետութեան հետ երկխօսութեամբ միայն կրնայ հասնիլ վերոնշեալ իր մտահոգութիւնները վերացնող լուծումներու, երկու երկիրներու սահմանային ապահովութեան եւ յարաբերութեան կարգաւորման, որովհետեւ Սուրիան Միջին Արեւելքի կարեւոր դարպասներէն մէկն է ու արաբական երկիրներու հետ իր յարաբերութիւններու կարգաւորումով սկսած է վերականգնել արաբական աշխարհի մէջ եւս իր երբեմնի ազդեցիկ դերակատարութիւնը:

Այդուհանդերձ, մինչեւ Թուրքիան գործնական քայլերու դիմելու վճռականութիւնը ունենայ, Սուրիան, համետեւած ըլլալով Թուրքիոյ դաւադրական մօտեցումը, կը շարունակէ իր տարածքները ազատագրելու վճռական քաղաքականութիւնը, անկախ թրքական կողմին խուսանաւումներէն:

«Գ.»

-Չորեքշաբթի, 17 Օգոստոս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Յալեպի Արուարձանի ճարապուս քաղաքին մէջ թրքական ուժեր բարձրախօսներով զգուշացուցած են բնակիչները եւ պահանջած իրենց տունները մնալ, սուրիական տարածքներու վրայ թրքական նոր յարձակումի մը հաւանականութիւնը նկատի ունենալով:



Միեւնոյն ատեն, Յասիչէի եւ Ռաքքայի մէջ ՍԱՆԱ-ի թղթակիցը յայտնեց, որ թրքական ուժերու ենթակայ զինուորական օդանաւեր հսկած են սահմանային քաղաքները, պատրաստուելով նոր յարձակումի մը:

- Երեքշաբթի, 16 Օգոստոսին, Սուրիական Բանակի Յրամանատարութիւնը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ մը, ուր յայտարարեց, թէ թրքական ուժերուն ենթակայ զինուորական օդանաւ մը հրթիռակոծեց Յալեպի արուարձանի զինուորական կարգ մը կեդրոններ, որուն հետեւանքով 3 զինուորներ նահատակուեցան եւ 6 վիրաւորներ արձակագրուեցան:



Յրամանատարութիւնը յայտնեց, որ սուրիական բանակի հակաօդային պաշտպանութեան համակարգերը դէմ դրին գրոհին եւ յարձակումը հակադարձեցին՝ զինեալ ահաբեկչական խմբաւորումներու համախմբումի կեդրոնները հրթիռակոծելով:

Յրամանատարութիւնը շեշտեց, որ այսուհետեւ փոխադարձ հարուածներով պիտի հակադարձէ սուրիական տարածքներու վրայ որեւէ յարձակումի:

- Երեքշաբթի, 16 Օգոստոս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ կենտրոնի եւ տեղական ինքնակարգավորման նախարար Յուսէյն Մախլուֆ Լիբանանի ժամանակաւոր կառավարութեան տեղահանուածներու հարցերու նախարար Իսամ Շարաֆ ալ-Տիսի հետ հանդիպում մը ունեցաւ՝ Լիբանանի մէջ սուրիացի տեղահանուածներուն տունդարձը ապահովելու շուրջ լիբանանեան կողմին առաջարկած ծրագիրը սերտելու օրակարգով:



Այս առիթով, նախարար Մախլուֆ շեշտեց, որ սուրիական պետութեան առաջնահերթութիւններէն մէկը տեղահանուածներուն ապահով տունդարձը իրականացնելն է, ինչպէս նաեւ սուրիական բանակին միջոցով ազատագրուած շրջաններուն ենթակառոյցները վերականգնելը:

Իր կարգին, լիբանանցի նախարարը բարձր գնահատեց սուրիական կողմին գործակցութիւնը՝ սուրիացի տեղահանուածներուն տունդարձի ապահովման առնչութեամբ:

Ան աւելցուց. «Լիբանանի մէջ սուրիացի տեղահանուածներուն տունդարձին շուրջ մեր առաջարկած ծրագիրը մանրամասնօրէն քննարկուեցաւ եւ սուրիական պետութիւնը իր պատրաստակամութիւնը յայտնեց բոլորին ընդունելու եւ այլաբնոյթ ծառայութիւններ մատուցելու անոնց. ինչպէս՝ ուսում, դեղորայք, կեցութիւն եւ այլն»:

- Երեքշաբթի, 16 Օգոստոս 2022-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Տնտեսութեան եւ Արտաքին Առեւտուրի Նախարարութիւնը պաշտօնական հաղորդագրութեամբ յայտնեց սուրիական-իրաքեան գործարար խորհուրդի կազմութեան իր որոշումը:



Խորհուրդին նպատակը պիտի ըլլայ զարգացնել Սուրիոյ եւ Իրաքի տնտեսական յարաբերութիւնը՝ առեւտրական, ներդրումային, արդիւնաբերական, գիւղատնտեսական եւ գթօսաշրջային ոլորտներուն մէջ:

Նախարարութիւնը աւելցուց, որ իրաքեան շուկայէն ներս սուրիական արտադրութիւնները լաւ սպառում ունին:

- Կիրակի, 14 Օգոստոս 2022-ին, Սուրիական Բանակի Յրամանատարութիւնը հաղորդագրութեամբ մը յայտարարեց, որ Շարաֆ Երեկոյեան ժամը 8:50-ին, Իսրայէլ լիբանանեան տարածքներէ հրթիռակոծեց Դամասկոսի եւ Թարթուսի արուարձանները:



Արդիւրը յայտնեց, որ Իսրայէլ բազմաթիւ հրթիռներ արձակեց Լիբանանի հարաւարեւելեան սահմանէն, թիրախ ընտրելով զինուորական կեդրոններ:

Յարձակումին հետեւանքով 3 զինուոր նահատակուեցաւ, արձանագրուեցան 3 վիրաւորներ եւ նիւթական բազմաթիւ վնասներ:

Արդիւրը աւելցուց, որ սուրիական բանակի հակաօդային պաշտպանութեան համակարգերը դէմ դրին հրթիռներուն եւ վար առին անոնց մեծամասնութիւնը:

Լուրեր Հայաստանի

ԵՐԵՎԱՆԻ «ՍՈՒՐՄԱԼՈՒ» ԿԵՂՈՒՆԻ ՊԱՅՐՈՒՄԻՆ ՀԵՏԵԿԱՆՔՈՎ ՄԱՀԱՅԱԾ 16 ԶԱՂԱՔԱՑԻՆԵՐԷՆ 13-ԻՆ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ՊԱՐԶՈՒՄԸ

Երեւանի «Սուրմալու» առեւտրական կեղրուկի տարածքին տեղի ունեցած պայթյունի հետեւանքով մահացած 16 քաղաքացիներէն 13-ին ինքնուրուխը պարզուած է:



«Արմէնփրէս»-ի հաղորդմամբ՝ այս մասին լրագրողներուն հետ գրոյցի ընթացքին յայտնեց Հայաստանի Արտակարգ Իրավիճակներու Նախարարութեան մամլոյ խօսնակ Հայկ Կոստանեանը: Անոր համաձայն, այն հատուածներուն մէջ, ուր տեղեկութիւն կայ, որ կրնան մարդիկ ըլլալ մեծ մեքենաներ չեն օգտագործուիր, հիմնական աշխատանքները ձեռքով կը տարուին՝ խնայելու մարդոց կեանքը:

ԱԼԻԵՒ. «ՂԱՐԱԲԱՂ ԱՊՐՈՂ ՀԱՅԵՐԸ Ո՛՞՞ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ, Ո՛՞՞ ԱՆԿԱՏՈՒԹԻՒՆ, Ո՛՞՞ ՅԱՏՈՒԿ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՆ»

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւ «Ազ. Կի.»-ի հետ հարցազրոյցի ընթացքին յայտարարած է, որ իրենք պետք է վերադառնան Լաչին (Բերձոր), Չապուխ (Աղաւնոյ) եւ Սուս:

«Ես արդէն յանձնարարած եմ պետական կոմիտէին կապ հաստատել ընկերներու հետ: Մենք շուտով գանտը պիտի վերադարձնենք իրենց տուները», ըսած է Ալիեւ:



Ալիեւ նշած է, որ Ատրպէյճանի հաւատարիմ է 9 Նոյեմբեր 2020-ի յայտարարութեամբ ստանձնած բոլոր պարտաւորութիւններուն, որոնց վրայ հիմնուած է Լաչինը (Բերձոր) շրջանցող նոր ճամբու կառուցումը եւ ձեռնարկուած այլ քայլերը:

«Հայաստանի մէջ պետք է հասկնան, որ հողովոյթի ձգձգումը իրենց ոչինչ պիտի տայ: Անոնք կը սխալին, եթէ կը կարծեն, որ մէկուկէս տարի ետք բան մը իրենց օգտին պիտի փոխուի: Որեւէ բան կրնայ փոխուիլ, սակայն մեր օգտին: Բոլորը կը տեսնեն շրջանին մէջ ու աշխարհի վրայ աշխարհաքաղաքական կացութիւնը: Այս ամէնը տեսնելու համար պետք չ'ըլլայ մեծ քաղաքական գործիչ: Իր աճող զինուորական, տնտեսական եւ քաղաքական հզօրութեամբ Ատրպէյճանը յաղթեց Հայաստանին, որովհետեւ անոնք կը սխալին: Անոնք չեն հրաժարած Ատրպէյճանի նկատմամբ իրենց տարածքային յաւակնութիւններէն: Ես գանտը պաշտօնապէս զգուշացուցած եմ հրաժարելու տարածքային պահանջներէն: Հակառակ պարագային մենք կրնանք նաեւ տարածքային պահանջներ ներկայացնել Հայաստանի դէմ», ըսած է Ալիեւ:

Ատրպէյճանի նախագահը յայտնեց, որ Հայաստանի եւ Ատրպէյճանի յարաբերութիւններու կարգաւորման հողովոյթին մէջ դարաբաղեան հարց չկայ: «Նման փորձեր եղած են, սակայն ես երբեք չեմ համաձայնած ատոր: Հայաստանը ի՛նչ կապ ունի ատոր հետ: Ասիկա մեր ներքին գործն է: Այսօր բանակցութիւններու սեղանին վրայ որեւէ կարգավիճակի մասին խօսք չկայ», ըսած է Ալիեւ:

Անոր համաձայն, Ղարաբաղ ապրող հայերը պետք է «ճիշդ քայլ» առնեն ու հասկնան, որ «իրենց ապագան կախեալ է միայն ատրպէյճանական հասարակութեան հետ համարկուելէն»:

«Ղարաբաղի մէջ ապրող հայերը ո՛չ կարգավիճակ, ո՛չ անկախութիւն, ո՛չ յատուկ արտօնութիւններ պիտի ունենան. անոնք Նոյնն են, ինչ որ Ատրպէյճանի մնացեալ բոլոր քաղաքացիները: Ատրպէյճանի քաղաքացիներուն իրաւունքները ինչպէս պաշտպանուած են, այնպէս ալ պաշտպանուած պիտի ըլլան անոնց իրաւունքները: Ինչպէս պաշտպանուած են Ատրպէյճանի մէջ ապրող ժողովուրդներուն իրաւունքները, այնպէս ալ անոնք պետք է պաշտպանուած ըլլան: Ասիկա միակ ուղին է», յայտարարած է Ալիեւ:

Անդրադառնալով Հայաստանի հետ յարաբերութիւններուն՝ ան անելուցս ըստ է. «Մենք պետք է խաղաղ բանակցութիւններու սկիզբը Հայաստանի հետ: Տակաւին դրական պատասխան չենք ստացած, սակայն յոյսով եմ, որ պիտի ըլլայ: Պետք է ստեղծուի սահմանազատման յանձնախումբ: Անոնք ալ կ'առարկէին, սակայն ի վերջոյ համաձայնեցան: «Չանգեզ ուրի միջանցքը պետք է», սակայն սկիզբը դէմ էին: Այժմ՝ յառաջիկայ շաբաթներուն, անոնցմէ կը սպասենք Չանգեզ ուրի միջանցքի ճամբան»:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏԵ ՀԱՅՐԵՆԻ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ

«Անթիլիաս».- Այսօր՝ Երկուշաբթի, 15 Օգոստոս 2022-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վանաբնակ միաբան հայրերը հաւաք մը ունեցան Պիքֆայայի Ս. Աստուածածին Վանքէն Ներս, գլխաւորութեամբ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին:



Նորին Ս. Օծուքիւնը իր գոհունակութիւնը յայտնեց Ս. Աստուածածին Վանքի Ուխտի Օրումն եւ Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին նշման մեծ թիւով հաւատացեալներու մասնակցութեան: Ապա, ան միաբան հայրերուն կարգ մը յիշեցումներ կատարեց եւ անոնցամաքելութեան ու յառաջիկայ գործունեութեան առնչուած իր հայրական ցուցմունքներն ու թելադրանքները փոխանցեց:

Հաւաքի ընթացքին յատուկ կերպով անդրադարձ կատարուեցաւ Երեւանի «Սուրմալու» առեւտրական կեղրուկին մէջ վերջերս պատահած պայթյունին, որուն հետեւանքով գոհուեցան հայորդիներ, եղան անհետ կորածներ եւ բազմաթիւ վիրաւորներ: Միաբան հայրերը իրենց ցաւն ու զօրակցութիւնը յայտնեցին Հայրենի մեր ժողովուրդի սիրելի գաւաակներուն եւ իրենց աղօթքը վերաբաշխեցին առ Աստուած, որ լոյս խորաններու մէջ հանգչեցնէ գոհուածներուն հոգիները, շուտափոյթ ապաքինում պարգեւէ վիրաւորներուն եւ ոյժ ու համբերութիւն տայ մեր հայրենակիցներուն:

ԳԱՐԵԳԻՆ Բ. «ԿՄՂՈՐԹԵՆԸ ԶՈՅԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԻՐԱԽՐՆԵՐՈՒ ՀՈՒՏԱԾՈՅԹ ԱՊԱՔԻՆՄԱՆ ՀԱՄԱՐ»

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ. ուղերձ յղած է «Սուրմալու» առեւտրական կեղրուկին մէջ տեղի ունեցած պայթյունին առնչութեամբ:

«Մտի խոր ցաւով կը հետեւիմք «Սուրմալու» առեւտրական կեղրուկին մէջ տեղի ունեցած պայթյունին ողբերգական հետեւանքներուն: Ի խորոց սրտի կ'աղօթենք զհիերու հոգիներու խաղաղութեան ու հանգստութեան համար, Սուրբ Հոգիին սփոփանքն ու մխիթարութիւնը կը հայցենք անոնց ընտանիքներուն եւ հարազատներուն: Այլեւ կ'աղօթենք բոլոր վիրաւորներու արագ ապաքինման համար՝ մաղթելով Տիրոջ խնամքն ու զօրակցութիւնը: Թող Բարձրեայն Աստուած օգնական եւ պահապան ըլլայ մեր Երկրին եւ ժողովուրդին», ըսուած է ուղերձին մէջ:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Հանգուցեալ ԱՆԴՐԱՆԻԿ ՄԵՄԵՐՃԵԱՆԻ Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 28 Օգոստոս 2022-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, Վիլլաներ - Հալէպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ ներքնասրահէն ներս:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Տեր Արթիւնեան եւ Հալլաճեան ընտանիքները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք մասնակից դարձան իրենց եղբօր եւ հարազատին՝ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ԼԵՒՈՆ ՏԵՐ ԱՐԹԻՆԵԱՆԻ մահուան սուգին: Հանգուցեալի քառասունից հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Հինգշաբթի, 18 Օգոստոս 2022-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Յակոբ եկեղեցոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00-ին: Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին եկեղեցոյ շրջափակը:

ՆԱԲՑԱԶԳՐՈՅՑ՝ ՆՅԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՆԵԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՅՕՂԻԿ ԱՂՁԳԵԱՆԻ ԻՏՈՒՆԵՐՈՒՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՆՅՏ

ՆՅԻ Երիտասարդական գրասենյակի աշխատանքներուն ծանօթանալու միտումով, «Գանձասար» հետեւեալ հարցազրոյցը ունեցաւ գրասենյակի պատասխանատու Յօղիկ Աղձգեանի հետ՝ անոր Յալեպ գտնուելուն առիթով:

«Գ.» - Կը հետեւիք ՆՅԻ Բիւրոյի Երիտասարդական Գրասենյակի վերջին չորս տարիներուն ծաւալած աշխատանքներուն, որոնք ուշագրաւ են իրենց նորարարութեամբ եւ հայ երիտասարդին մէջ ազգային ոգի սերմանելու ուղղութիւններով: Այս առնչութեամբ անելի կրնա՞ք մանրամասնել գրասենյակի գործունեութեան եւ կառոյցին մասին: Ինչպիսի՞ աշխատանքներ կեանքի կոչուած են մինչեւ այսօր եւ ի՞նչ են ձեր յառաջիկայ ծրագիրները, մանաւանդ նկատի ունենալով Յայաստանի այսօրուան կացութիւնը:

Յ. Ա. - ՆՅԻ Երիտասարդական Գրասենյակի իմասական գործը կը կերտուանայ պատանեկան, երիտասարդական եւ ուսանողական միութիւններու աշխատանքներուն վրայ: Ինչպէս նաեւ կը համակարգէ ու կը վերահսկէ համահայկական տարբեր բնոյթի ծրագրեր:

Գրասենյակը տեղափոխուած է Յայաստան 2000-ական թուականներուն եւ հաստատուած է Երեւան: Այս թուականէն առաջ ան կը գործէր Լիբանանի մէջ, իսկ 2021 թուականին վեցամսեայ դրութեամբ տեղափոխուեցաւ Արցախ՝ Ստեփանակերտ, վերահսկելու յետպատերազմեան շրջանին ծաւալուած աշխատանքները: Այսօր Գրասենյակի պատասխանատուներն են ընկ. Արշակ Մետրոպոլիտանն ու եւ:

Գրասենյակի աշխատանքները դիրքացնելու համար կը գործեն յանձնախումբեր, որոնք ունին ոլորտային բնոյթ:



Այս յանձնախումբերուն մաս կը կազմեն տարբեր շրջաններէ ընկերներ: Ունինք քարոզչական, դաստիարակչական, ուսանողական, պատանեկան, դեպի Երկիր յանձնախումբերը: Դեպի Երկիր յանձնախումբը կը կազմակերպէ մեր Պատմական Յայրենիքի ամբողջ տարածքին իրականացող ծրագրեր, ինչպէս ճամբարներ, բանակումներ, ուխտագնացութիւններ եւ այլն: Յարաբերական յանձնախումբը կը ներկայացնէ ՆՅԻ Երիտասարդականը միջազգային կազմակերպութիւններու մէջ: ՆՅԻ Երիտասարդականը այսօր կ'անդամակցի միջազգային երեք կազմակերպութիւններու՝ IFM.- International Falcon Movement, որ ամբողջ ընկերվար երիտասարդութիւններու պատանեկան միութիւններու համախմբումն է, IUSY.- International Union of Socialist Youth (Ընկերվար երիտասարդներու Միջազգային Կազմակերպութիւն), որ կը միատեղէ ողջ աշխարհի մէջ ընկերվար գաղափարախօսութիւնը ունեցող երիտասարդական միութիւնները, որուն փոխնախագահի պաշտօնը կը վարէ ընկ. Սարինէ Աբրահամեանը (Երիտասարդական Գրասենյակի նախկին պատասխանատուն) եւ YES-ը Young European Socialist, որ Եւրոպայի ընկերվար երիտասարդական միութիւններու համախմբումն է: Այս յանձնախումբի անդամները կը մասնակցին տարբեր համաժողովներու, խորհրդաժողովներու եւ նշեալ միութիւններու տարեկան ժողովներուն, ներկայացնելով բանաձեւեր, որոնք մասնաւորապէս կ'առնչուին մեր դատին, Արցախին, Յայոց Ցեղասպանութեան եւ մարդու իրաւունքներուն հետ: Մեր ներկայացուցիչներու աշխատանքով յիշեալ միութիւնները իրենց աջակցութիւնը կը յայտնեն հայ երիտասարդին: Օրինակ «Դիմադրութիւն» շարժումին ընթացքին IUSY-ին պաշտօնական յայտարարութիւնով դատապարտեց իշխանութեան ապօրինի ձերբակալումները:

ՆՅԻ Երիտասարդական Գրասենյակի աշխատանքներուն կ'օժանդակէ երիտասարդական խորհուրդը, որ կը բաղկանայ երեք փորձառու ընկերներէ: Անշուշտ, այս բոլորը վերահսկողութեամբ Բիւրոյի Երիտասարդական հարցերու լիազօր ընկ. Յովսէփ Տէր Գեորգեանի:

Գրասենյակի կարեւոր ծրագիրներէն են Արցախի եւ Սիւնիքի մէջ կազմակերպուած նախաձեռնութիւնները, որոնք նպատակն է ամրապինդ պահել երիտասարդութիւնը իր հայրենիքին եւ իր ծննդավայրին մէջ, մանաւանդ Արցախի պատերազմէն ետք, երբ յուսալքուած վիճակ մը գոյութիւն ունէր երիտասարդներուն մօտ, անոնք շատ կը մտահոգուէին իրենց ապրուստի ապահովման հարցերով: Այս ժամանակշրջանին գրասենյակը վեցամսեայ դրութեամբ տեղափոխուեցաւ Արցախ եւ հոնկէ հսկեց աշխատանքները: Այս ծրագիրներէն առաջինը «Վերելք» էր, որուն մասնակցեցան անելի քան հարիւր երիտասարդներ: «Վերելք»ը փոքր ձեռնարկութիւններու քաջալերման ծրագիր է: Երիտասարդները մասնակցեցան դասընթացներու, իսկ լաւագոյնները անցան յաջորդ հանգրուան, ուր յաղթողները ստացան նիւթական պարգէս, որպէսզի իրենց ձեռնարկութեան իրականացման համար գործնական քայլի անցնին: Նոյն այս ծրագիրը իրականացաւ Սիւնիքի մէջ «Վերելք Սիւնիք» անուան ներքեւ: Մինչեւ այսօր կը հետեւիք անոնց աշխատանքներուն եւ արդիւնքները շատ լաւ են: Այս ծրագիրը բարեգործական բնոյթ չունի, այլ փաստ մըն է, որ երբ երիտասարդը քաջալերող ունենայ, կրնայ իրականացնել իր ծրագիրները: Յատկացուած գումարները երիտասարդները ժամանակի ընթացքին առանց տոկոսի պիտի վերադարձնեն: «Վերելք» ծրագիրը շարունակական բնոյթ ունի: Արցախի մէջ կազմակերպուեցան նաեւ միութիւնները վերաշխուժացնելու աշխատանքներ, ճամբարներ եւ բանակումներ: Այս աշխատանքները եղան համագործակցաբար ԱԵՄ-ի հետ:

Սիւնիքի ծրագիրները ամփոփուեցան «Դեպի Սիւնիք» վերնագրին ներքեւ: Առաջին քայլով ՅԵՄ-ի անդամ ընկ. Գոր Մաթեւոսեանը տեղափոխուեցաւ Սիւնիքի Կապան քաղաքը, ուր կազմակերպուեցան արշաւներ, ճամբարներ, ուսումնասիրական մրցանք եւ Երեւանի պետական համալսարանի մէջ խորհրդաժողով, որուն մասնակցեցան Գորիսի համալսարանին աշակերտները: Սիւնիքի աշխատանքները եղան համագործակցաբար ՅԵՄ-ի հետ:

Յառաջիկայ շրջանին ունինք ուսանողական եւ պատանեկան խորհրդրաժողովներ:

«Գ.» - Երիտասարդները ձեր աշխատանքներուն մէջ ներգրաւելու դժուարութիւններ կը դիմագրաւէ՞ք: Եթէ՛ այո՛, ի՞նչ են այդ դժուարութիւնները եւ ձեր որդեգրած լուծումները:

Յ. Ա. - Այս դարաշրջանին երիտասարդութիւնը հասարակական, միութեանական եւ կամաւորական աշխատանքներուն մէջ ներգրաւելու գործը բաւական դժուարութիւններ ունի, բայց մենք որպէս կազմակերպուած եւ տարիներու փորձառութիւն ունեցող կառոյց՝ այդ բոլորը որպէս մարտահրաւեր կ'ընդունինք: Իւրաքանչիւր շրջան ունի իր տեղական խնդիրները կամ մարտահրաւերները, շատ ատեն ընդհանրական պատկեր տեսնելու դժուարութիւնը կայ, հոս շատ կարեւոր է, որ իւրաքանչիւր ընկեր, ո՛ր շրջանէն ալ ըլլայ, կարենայ հաւասարեցնել տեղական ու համահայկական հարցերու տեսողութիւնը:

«Գ.» - Համագործակցութեան ի՞նչ եզրեր կան Սփիւռքի եւ Յայաստանի երիտասարդական կազմակերպութիւններուն միջեւ:

Յ. Ա. - Շատ կարեւոր է Սփիւռքի եւ Յայաստանի միութիւններու միջեւ կապերու ամրապնդումը, կը կարծեն, որ այս մէկը միայն համահայկական միջոցառումներու ճամբով կարելի կ'ըլլայ: Սակայն այդպէս չէ, կարելի է այլ ձեւերով, օրինակ Արցախի ընկերները երբ գործուողուեցան Սուրիա, այդ ծրագիրը շատ դրական ազդեցութիւն ձգեց թէ՛ Սուրիոյ, թէ՛ Արցախի ընկերներուն վրայ, որոնք նոր թափով վերադարձան եւ շարունակեցին իրենց գործունեութիւնը: Շատ կարեւոր է մշտական պահել կապերը, մանաւանդ որ կ'ապրինք դիւրին հարողակցութեան դարաշրջանի մէջ:

«Գ.» - Հայ երիտասարդը որքանո՞վ մտահոգ է Հայրենիքի ներկայ իրավիճակով եւ ինչպէ՞ս կը յայտնէ իր դժգոհանքը:

Յ. Ա. - Որպէս Դաշնակցական երիտասարդութիւն միշտ ալ ունեցած ենք մեր ըսելիքը, թէ գնահատած ենք եւ թէ չենք վարանած բարձրաձայնել այն ինչ որ սխալ տեսած ենք: Ամենակարեւորը, որ անցնող երեսուն տարիներու ընթացքին մենք դիմադրեցինք եւ բարձրաձայնեցինք մեր մտահոգութիւնները երբ որեւէ իշխանութիւն անցաւ մեր սկզբունքային կարմիր գիծերը: 2018-ին մենք մեր ձեռքը մեկնեցինք նորընտիր իշխանութեան, բայց երբ ան անցաւ կարմիր գիծերը՝ մշակութային, ընկերային, քաղաքական ոլորտներու մէջ եւ մանաւանդ երբ անցաւ Հայրենիքի կարմիր գիծը, այն ատեն էր, որ մենք դիմադրեցինք: Մղուող բոլոր պայքարներու ընթացքին, երբ կը փորձեն արգիլել դաշնակցականներու մուտքը Հայրենիք, ապօրինի կալանաւորել եւ կամ նոյնիսկ հալածել, չեն կրնար կասեցնել մեր գործունեութիւնը, որովհետեւ մահէն չվախցող երիտասարդութիւնը պիտի չվախանայ անոնցմէ: Հետեւաբար մենք կանք եւ պիտի շարունակենք պայքարիլ եւ ամէն երիտասարդ Հայրենիքի կամ Սփիւռքի մէջ պէտք է գիտակցի, որ ունի շատ մեծ եւ լուրջ պարտականութիւն Հայրենիքի նկատմամբ:

Հարցազրոյց վարեց Արփի Գեորգեան

Տիկին...

Սկիզբ՝ էջ 7

տակ իր վաղամեռիկ կնոջ՝ Վերժինի, որ գաւկնի ծնունդին ընթացքին կը մահանայ, միայն 32 տարեկան: Հալեպի մէջ Կիւլպէնկեան անունով նախակրթարան մըն ալ կար՝ Ազգային Պօղոս Կիւլպէնկեան վարժարան, որուն բարերարը՝ Նոյն Պատրիկ Կիւլպէնկեան իր մահացած երախային Պօղոսիկի անունով կոչած է դպրոցը: Հալեպի մէջ հիմնած է նաեւ «Եփրատ» օրաթերթը, երկու տարի ինք ըլլալով խմբագիրը:

Այս մայրանոցին գլխաւոր մակաբարձուհին էր տիկին Զաթրինը, որմէ բոլորը, բառացիօրէն բոլորը՝ մայրանոցի աշխատողներէն եւ *կըրտներէն* մինչեւ ծննդկան մայրերը կը սարսափէին: Այդ սարսափը կարծես իր բարերար ազդեցութիւնը կ'ունենար, որովհետեւ անգամ մը որ տիկին Զաթրինը իր որոտացող ձայնով պոռար՝ «Հը՛՛ տետիմ, հատէ հը՛՛», ցաւերու մէջ ինքզինք մոռցած մայրը հպատակելէ գատ ուրիշ բան չէր կրնար ընել: Եւ գաւակը ան-

միջապէս կը ծներ, շնորհիւ տիկին Զաթրինի հմտութեան եւ անշուշտ՝ որոտացող ձայնին:

Սովորական մահկանացուներուն հետ տիկին Զաթրինը թրքերէն կը խօսէր, կամ հայերէն, թրքերէն բառերով, իսկ մնացեալին հետ՝ բժիշկներուն եւ իր յարգանքը վայելողներուն հետ՝ անգլերէն: Շատ լաւ անգլերէն գիտէր անշուշտ, Ամերիկեան Համալսարանը ուսանած օրերէն, ինչպէս եւ բողոքական կրօնական երգերէն, որոնք հիմնականին մէջ Ամերիկայէն ներմուծուած կ'ըլլային եւ տեղական ոյժերով գէշ աղէկ հայերէնի թարգմանուած կամ թրքերէնի:

Յետոյ օր մըն ալ տիկին Զաթրինը ա՛լ չեկաւ Կիւլպէնկեան Մայրանոց. ըսին թէ Ամերիկա գացեր է, թոռնուհիին քով, որովհետեւ *«հոս ա՛լ հարազատ մէկը չունի»*:

Մինչեւ այսօր կը յիշեմ Տիկին Զաթրինին կապոյտ աչքն ու կը լսեմ որոտացող ձայնը. դժբախտաբար սակայն չեմ յիշեր իր մականունը, պարզապէս որովհետեւ բնա՛ւ չեմ լսած գայն: Ինք պարզապէս Տիկին Զաթրին էր բոլորին համար:

ՍՓԻՈՔԻ ՏԱՐՈՒՄ ԱՌԻԹՈՎ

ՍՓԻՈՔԸ ՆՈՐ ՄԱՐՏԱՅՐԱԴԵՐՆԵՐՈՒՆ ԸՆԴԱՌԱՋ



Ս. Սահելյան

ՏԱՐԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ...

Եթե քիչ ավելի խորաթափանց աչքով դիտենք Սփիւռքը բաղկացնող երկիրները, պիտի տեսնենք, որ այս հսկայական տարածքին մէջ, կան «բնական» ենթաշերտեր, որոնցմէ մէկն ու միւսը ունին նմանութիւններ եւ զգալի տարբերութիւններ, ճիշդ այնպէս՝ ինչպէս այսօր պատմութեան էջերուն անցած անցեալի գաղութները: Շատեր ունին իրենց տեղական պատմութիւնն անգամ:

Տարբերութիւնները կը ծնին բազմաթիւ ազդակներ. գաղութի կազմաւորման առարկայական պայմանները: Անմիջապէս արձանագրենք, որ գաղթածախները ո՛չ մէկ ատեն ծնած են նախօրօք տրուած որոշումով, ո՛չ ալ կազմալուծուած ու ձուլումի գոհ դարձած՝ որոշումով. անհատներ կրնան որոշումով գաղթական դառնալ, սակայն գաղութի մը կազմաւորումն ու կազմակերպ կեանքը կը հետեւին տարբեր օրէնքներու՝ պահանջներու, բազմերես կարիքներու, որոնցմէ մէկն է հայութեան, հայ կեանքին հետ կամուրջներու ստեղծումն ու պահպանումը, իսկ այդ պահանջին թուլացումը պատճառներէն մէկն է գաղութի լուծարման: Առարկայական պայմաններուն շարքին է տուեալ երկրին իրավիճակին ազդեցութիւնը (իրավիճակ ըսելով, կը հասկնանք քաղաքական, մշակութային, տնտեսական եւ բազում այլ ազդակներ), այլ երկիրներու-ուժերու հետ յարակցութիւնն ու անոնցմէ հասած ազդեցութիւնները եւ այլն: Այս բոլորին կու տանք «տեղական պայմաններ» ընդհանուր որակումը:



Դարձեալ խօսիմք օրինակով մը. որոշ երկրի մը մէջ, ուսումնական համակարգը ունի նախադրեալներ ու պայմաններ, որոնք կրնան տարբեր ըլլալ այլ երկրի մը հարկադրած պայմաններէն (լեզուներ, պետական քննութիւններու հարկադրանք, համալսարան մուտքի նախապայմաններ-պահանջներ...): Սա կ'աձանագրենք՝ ո՛չ թէ ընդհանուր հարցը փոքրացնելու, նեղ սահմանի մը մէջ դիտելու մօտեցումով, այլ նշելու՝ որ սփիւռքեան որեւէ օճախ բացարձակապէս ինքն իր գլխուն տերը չէ, այլ ստիպուած է ենթարկուելու տուեալ երկրին պահանջներուն, պայմաններուն, պետք է ներգրաւուի անոնց մէջ, քայլ պահէ այդ երկրի կեանքին հետ: Սա արդէն կը ստեղծէ տարբերութիւններու այլ մակարդակ մը, այսինքն, տուեալ գաղութ մը, իր կամքէն անկախ, կ'ապրի այլ գաղութ մը բոլորովին կամ մասամբ տարբեր կեանք մը, տուրք կու տայ տարբեր հրամայականներու: Գտնուելով կ'ըլլայ այն, որ հայկականութիւնը կոչուած հասկացութիւնը որոշ պայմաններով կը կրէ, նահանջ կ'արձանագրէ ինքնաբերաբար, անկախ հաճոյ թուի գաղութի տերերուն, թէ՛ զանոնք դէմ որոշ անտարբերութեան դիրքի վրայ: Բիչ մը ավելի՝ մանրամասնելով, կրնանք տեսնել, որ Ֆրանսայի, Միացեալ Նահանգներու կամ Բնաստայի մեր գաղութները ինչպիսի՞ առարկայական տարբերութիւններու ենթակայ են, բաղադրուելով իրարու հետ, կամ՝ այլ գաղութներու, հետեւաբար, որոշ ժամանակ տեք, պարզ աչքով կը տեսնենք, որ իւրաքանչիւրը միւսէն տարբեր «կենդանի» մըն է (կենդանի եզրը չենք գործածեր արհամարհական կամ մէկը միւսէն ստորադաս սեպելու տրամաբանութեամբ): Տարբերութիւնները ավելի՛ ակնբերել կը դառնան, երբ շարժիմը դէպի արեւելք, այսինքն՝ նկատի ունենանք միջին-արեւելեան մեր գաղութները եւ արեւմտեան օճախներուն հետ անոնց ստեղծած՝ ակամայ հեռաւորութիւնները (ոչ աշխարհագրական առումով): Գտնուելով կ'ըլլայ այն, որ (դարձեալ նեղ օղակի մէջ առնուած օրինակով մը), որոշ գաղութի մը մէջ հազար ու մէկ դժուարութեամբ խմբագրուած-պատրաստուած դասագիրք մը ընդունելի, մատչելի կամ յարմար չի նկատուիր այլ գաղութի մը մէջ:

Հոս կ'ուզենք բանալ փակագիծ մը: Մասնաւորաբար արեւմտեան կարգ մը կազմակերպ գաղութներու մէջ, մեր ակնարկած անտարբերութիւնը երբեմն կ'ունենայ յաւելեալ ցւացնող եւ մարդակերտ դրսեւորումներ: Հայկական դպրոցը հետզհետէ կը դիտուի իբրեւ ապահով միջավայր՝ ծնողներու համար (հանրային դպրոցին մէջ կան կռուազան խմբակներ, թմրեցուցիչի եւ բարոյականութեան վնասող այլ գործոններ), իսկ դպրոցը կառավարողներու համար՝ առաւելաբար տնտեսական յանձնաձեւումի ենթակայ հաստատութիւն (որքան մեծ ըլլայ աշակերտներու թիւը, կրթաթոշակներէն գոյացած եկամուտը կ'ըլլայ ավելի): Տեղ-տեղ ստեղծուած է վիճակ, ուր պատասխանատու դիրքերու վրայ եղողներ... ճակատումի մէջ են հայերէն դասաւանդող ուսուցիչներու հետ, դեմ կը կանգնին հայերէն գիրքերու ընթերցման անոնց թելադրանքին կամ այդ նիւթերը չեն դիտուիր իբրեւ առաջնահերթ: Նման պատասխանատուներ իբրեւ «դաշնակից» ունին մեծ թիւով ծնողներ, որոնք հայերէնին կը մօտենան իբրեւ «փոր չկըտացնող, հետեւաբար՝ անկարելիոր պարանք» («Հայերէն գիրք կարդալով՝ մեր գաւակները

հայագէտ պիտի դառնան») արդէն համատարած մտածողութիւն է քիչ մը ամէն տեղ: Ալ ի՞նչ խօսք՝ հայկական դպրոցներու մէջ խօսակցական լեզուին մէջ օտար լեզուներու տիրապետութեան, երբ հայ ուսուցիչն իսկ կը ստիպուի հայերէնով ասանդուած դասապահերուն օտար լեզուներու դիմելու՝ որպէսզի... հասկցուի աշակերտին կողմէ:

Անշուշտ տարբերութիւններ կան եւ աստիճանաբար կը խորանան կը գարգանան՝ ապրելակերպի-կենցաղի, տնտեսական-ընկերային եւ այլ գեոհիմններու վրայ: Օրինակի համար, որոշ գաղութի մը մէջ հասակ առած, ասպարեզի մը մէջ վաստակ ու դիրք կերտած անձ մը դժուարութիւն կ'ունենայ (երբեմն ալ անյարթախարտի խոչընդոտներ կը դիմագրաւէ) այլ գաղութ տեղափոխուելով, կը մոռնայ, թէ բոլոր գաղթածախներն ալ, ի վերջոյ, մասնակներն են Սփիւռք կոչուած համայնակուլ կենդանին...: Սա քննարկման դաշտերու մէջ չառնուած երես մըն է սփիւռքեան մեր կեանքին մէջ, թէեւ ազդու է: (հարցը ունի բազմաթիւ երեսներ. Օրինակ, միջին արեւելեան երկրի մը մէջ մասնագետ բժիշկ մը, ատամնաբուժ մը կամ ճարտարապետ-եարտարագէտ մը, գիտական կալուածի մէջ հմտացած վաստակաւոր մը, արեւմտեան երկրի մը տեղափոխուելով՝ կրնայ հարկադրուիլ, մարդածին օրէնքներու ճնշումին տակ, դառնալու... ճաշարանատեր կամ մեղուիլ կալուածային առեւտուրի դաշտ: Իսկ ազգային կեանքին մէջ ծառայողներ՝ ուսուցիչ եւ ընդհանրապէս գիրի մարդիկ, դեմ յանդիման կը գըտնուին բազմապիսի խոչընդոտներու եւ կը ստիպուին հրաժեշտ տալ իրենց վաստակը կերտած ասպարեզին, այլապէս պատճառելով մարդուժի մըսխում...):

Փակենք «մանրութիւններ» նկատի ունեցող այս փակագիծը, առանց ամուրած գգալու:

...ՆՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Վերոյիշեալ տարբերութիւնները պարզապէս օրինակներ են այն տարբերութիւններու համայնապատկերին, որ վիճակուած է Սփիւռքին: Գոնէ տեղ մը արձանագրենք նաեւ, որ այս համայնապատկերին դիմաց, կայ Հայրենիք կոչուած միաւորը, որ այլապէս տարբեր «կենդանի» մըն է համայն հայութեան պատկերին մէջ, ունի իր ցւաւերն ու մասնակից է համահայկական կոչուած ողբերգութիւններուն, ո՛չ միայն քաղաքական-ապահովութեան առումով: Հայրենիքը կ'ապրի նաեւ իր առանձին ողբերգութիւնները, սկսելով մշակութային մարզէն՝ մինչեւ քաղաքական-պետականաշինութեան կալուածները: Անոնք յարակից են մեր շօշափած նիւթին, սակայն կ'իյնան Սփիւռքի կարկինէն անդին:

Եթէ պիտի խօսիմք Սփիւռքի մարտահրաւերները դիմագրաւելու մասին, բնականաբար չենք կրնար մեկնակետ ունենալ հսկայական տարբերութիւնները (թէեւ չենք ալ կրնար անտեսել զանոնք), այլ պետք է որոնենք ու սահմանենք այն մարզերը, կալուածները, որոնք կը կազմեն գաղութներուն նմանութեան եզրերը, եւ այդ նմանութիւնները ծառայեցնել տարբերութիւններուն նսեմացման եւ հասարակաց վախճանական նպատակներու մարմնաւորման:

Անմիջապէս շեշտենք, որ արդի աշխարհը մեզի կ'ընծայէ այնպիսի միջոցներ, հնարաւորութիւններ, որոնք գոյութիւն չունէին անցեալին: Ծիշո՞ք է, որ համաշխարհայնացումը ունի բազմերես բացասական գործօններ, սակայն նաեւ ունի դրական երեսներ, որոնք ճիշդ օգտագործուելու պարագային, կրնան բարիքի վերածուիլ: (Այս իմաստով, որոշ եւ գոհունակութիւն առթող փորձեր կը կատարուին, սակայն կը մնան մասնակի, երբեմն «տեղայնական», սպասուած «համայնակուլ» ընթացքը շրջելու աստիճանին չեն հասած):


Տարբեր գաղութներու միջեւ նմանութիւնները բազմաթիւ են, ինչպէս իւրաքանչիւրին՝ տեղայնական ձեւով, նմանապէս ալ բոլորին դիմաց հասարակաց մարտահրաւերները դիմելու առումով: Գործնական ըլլալու համար, թուենք քանի մը օրինակ: Սփիւռքեան գաղութները, այսինքն՝ ամբողջ սփիւռքը ունի հայապահպանման հրամայականը. սա կը նշանակէ պահպանել լեզուն, հաղորդ մնալ մեր պատմութեան, մշակոյթի գարգացման եւ ենթաբաժիններուն (հարցը լեզուագէտ, պատմագէտ եւ արուեստաբան ըլլալու մասին չէ, այլ՝ տարրական, հիմնական գիտելիքներու մթերման, այնքան մը, որ զանոնք իւրացնողը ո՛չ միայն ինքզինքը հայ զգայ, այլ նաեւ հպարտ զգայ, որ ինչպիսի՞ ազգի մը ժառանգորդն է, նման բոլոր այն ազգերուն, որոնք այսօր աշխարհի բեմին վրայ կը կանգնին բարձրաճակատ, հետեւելով «*մենք մեզ ոչ մէկից չենք գերադասու*» սկզբունքին):

Նման պահանջէ մեկնելով, անհրաժեշտ կը դառնայ մշակումը լայն իմաստով ուսումնական-կրթական ծրագիրի մը, որ ո՛չ միայն պահպանէ որոշ մակարդակ, այլ այդ մակարդակը՝ ընդունելի նուազագոյն մակարդակը պարտադրէ աշխարհասփիւռ հայութեան:

Առաջին ակնարկով, անուաճելի բարձունք մը կրնայ թուիլ ասիկա, սակայն գործը կը դիւրանայ, եթէ գաղութներու միջեւ ստեղծուի բաւարար հարդրակցութիւնն ու փորձառութեան փոխանակումը, որպէսզի ճշդունի գիտելիքներու նուազագոյն ընդունելի եւ անհրաժեշտ շտեմարանը եւ անոր հիմամբ ստեղծուին, օրինակ՝ դասագիրքեր ու մանուկներու, երիտասարդներու եւ այլ տարիքի հայերու յարմար ծրագիրներ: (Չենք անտեսեր առարկայական միւս տուեալը, չգործածելու համար «աղէտ» եզրը, որ կու գայ խառն ամուսնութիւններէ եւ Հայ Ընտանիք, մինչեւ իսկ Ընտանիք հասկացութեան նսեմացումէն, թուլացումէն ու ջլատումէն):

Եւ որպէսզի չմնանք տեսականի եւ վերացականի մթնոլորտին մէջ, խօսիմք երկու օրինակով, բացատրելու համար բոլորին համար հասարակաց ծրագիրներու կազմաւորման եւ տարածման մեր մտածումը:

ՊԱՆԱԿԱՆ ԿՆՆՈՒՄՆԻԿ ԵՒ ՏԻԿԻՆ ԱԶՆԻԻ



Վրա Մխսեան

Յիսուսական եւ վաթսուսական թուականներուն Նոր Գիւղի բանուկ ճամբաներու եզերքին բարձրացած կառոյցներու առաջին յարկը սովորաբար վարձու կը տրուէր հայ արհեստաւորներու, նպարավաճառներու կամ այլազան գործատերերու: Մեր թաղի հիւսիս արեւմտեան անկիւնի երկյարկանի քարաշէն կառոյցը մինչեւ վաթսուսականներու սկիզբը կը պատկանէր իրենց շրջապատին հետ բարի դրացնութիւն ընող Գապաքեան ընտանիքին: Պարոն Անդրանիկ եւ իր ժրաջան տիկինը՝ Ազնիւ, շրջակայքի գրեթէ բոլոր հայ տանտիկիններէն սիրուած՝ բեղուն նպարավաճառանոց մը կը բանեցնէին Գապաքեաններու շէնքին առաջին յարկին վրայ: Իր ներկայութեան անունը պարոն Անդրանիկ կամ Անդո էր: Իր բացակայութեան՝ պախալ Անդո էր. աւելի յաճախ՝ Չուլախ Անդո կամ Չուլախ Անդրանիկ: Պատանի տարիքին՝ թեւերը գլուխէն վեր բարձրացուցած՝ նետուէր էր շատ ծանծաղ ջրաւազանի մը մէջ: Ձեռքերը՝ մարմնին ամբողջ ծանրութեամբ՝ (բաւական ծանր էր) ակնկալուածէն շատ աւելի արագ հանդիպէր էին աւազանի յատակին եւ ուժգնօրէն դէպի նախաբազուկները երկտակ ծալուէր: Արդիւնքը այն էր եղեր, որ Անդրանիկ ի սպառ կորսնցնէ ձեռքերը բնականոն կերպով գործածելու կարողութիւնը, ուրկէ նաեւ՝ Չուլախ Անդո եւ Չուլախ Անդրանիկ մակդիրները:

Պարոն Անդրանիկ եւ տիկին Ազնիւ կանուխ առաւօտէն մինչեւ իրիկուն անխոնջ կ'աշխատէին իրենց խճողուած, բայց բաւական կոկիկ նպարավաճառանոցին մէջ: Ինչ կը վերաբերի տիկին Ազնիւին՝ բնաւորութեան եւ անուան իմաստին միջեւ աւելի լիակատար նմանութիւն դժուար էր գտնել: Պարոն Անդրանիկն ալ, իր կարգին՝ այդ օրերու գործատերերուն հետ բաղդատած՝ բաւական հեզ բնաւորութեան տէր մարդ մըն էր: Առաւօտեան ժամը եօթնէ մինչեւ տասնմէկ տասներկու յաճախորդներու անվերջ շարան մը պարոն Անդրանիկին եւ տիկին Ազնիւին գլուխ քերելու առիթ չէր տար: Այդ չորս-հինգ ժամերու ընթացքին, Նոր Գիւղի լայնքին ու երկայնքին՝ հայ տիկիններ մովաթէ մեծ պայուսակներով, որ ընդհանրապէս սեւ, կանաչ, դեղին, մանիշակագոյն, սրճագոյն կամ մոխրագոյն կ'ըլլային, շուկայ կ'իջնէին իրենց ընտանիքին օրուան ճաշերը պատրաստելու յատկացուելիք նպարեղէնները գնելու: Զայ տիկինները այդ մոմսպատ, այլազան գոյնի պայուսակները կը գնէին Նոյն ճամբուն վրայ գտնուող հայ վաճառատուներէն: Այդ վաճառատուներէն կը յիշեմ Զայկազին խանութը ինչպէս նաեւ Գարակէօզեան եղբայրներու հաստատութիւնը: Վերջինը՝ մինչեւ վաթսուսականներու սկիզբը կը գտնուէր յարակից թաղի հարաւ

արեւմտեան անկիւնը, հին շէնքի մը առաջին յարկին վրայ: Կը յիշեմ մանաւանդ անոր տախտակամածը, որ բառին բուն առումով՝ տախտակի յղկուած եւ միագօղուած շերտաձողերով շինուած էր եւ յաճախորդներու իւրաքանչիւր քայլափոխին հետ հեղձամղձուկ հոգոցներ կը հանէր: Վաթսուսականներու սկիզբը Գարակէօզեան եղբայրները իրենց վաճառատունը փոխադրեցին Նոյն թաղին հիւսիս արեւմտեան կողմի Նորաշէն, բազմաշարկ շէնքին առաջին յարկը: Նոր խանութը հինէն շատ աւելի լուսաւոր եւ ընդարձակ էր՝ Նորոյց ցու-



ցափեղկերով եւ դարակներով: Սակայն տախտակամածը տախտակի հետ հարեւանցի կապ Նոյնիսկ չուներ. շինուած էր շինարարական շատ կարծր նիւթերու միախառնումով, որ՝ վրան կոխող մարդոց ծանրութեան բոլորովին անտարբեր՝ ոչ կը հառաչէր, ոչ իսկ կը Նուար. գողերու նախասիրած մակերեսը... Մինչեւ հիմա տակաւին կը կարօտնամ հին խանութի տախտակամածին հոգեյոյզ հեծեծանքները...

Աւելի բարօր ընտանիքներու տանտիկինները ընդհանրապէս մովաթէ պայուսակ չէին գործածեր. անոնց պայուսակները բարձրորակ կերպասով կամ Նուրբ կաշիով շինուած կ'ըլլային եւ գիրենց շալկած տիկիններու ընտանիքին նիւթական բարձ մակարդակին ակներեւ վկաներն էին: Գոնէ այդ բարեկեցիկ տանտիկիններէն ոմանք այդպէս համոզուած էին՝ մովաթէ պայուսակ շալկած կիներուն քովէն անցած ատեն՝ իրենց կողմնակի եւ բարձրայոյն նայուածքներէն դատելով:

Պարոն Անդրանիկին խանութը երկու մասէ կը բաղկանար. նպարեղէններու բաժին՝ եւ սառի շտեմարան (սառցատուն): Նպարեղէններու յատկացուած բաժինը կը գրաւէր համալիրի տարածքին երեք չորրորդը: Իսկ խանութին յետսամասը յատկացուած էր սառցատան: Ամէն առտու՝ քաղաքի սառցագործարանին մէջ նախորդ գիշեր արտադրուած սառոյցի կաղապարներով լեցուն կանաչ եւ խոշոր կառք մը կանգ կ'առնէր սառցատան առջեւ: Կառ-

քէն դուրս կը ցատկէին երեք արարաշխատաւորներ եւ տասը վայրկեանէն սառցատունը գետնէն մինչեւ ձեղունը կը լեցնէին սառի հսկայ կաղապարներով: Այնքան մեծ էին կաղապարները, որ չափահաս մարդ մը պէտք է երկու թեւերը լայն բաւար՝ գանոնք վերցնելու համար:

Այդ տարիներուն ելեկտրանութեամբ գործող սառնարան ունեցող ընտանիքներ շատ սակաւաթիւ էին: Նոյնիսկ բարձրորակ պայուսակ շալկած՝ բաղդատաբար բարեկեցիկ տիկիններու ընտանիքներուն հազիւ տասը տոկոսը սառնարան ունէր: Բարեբախտաբար, սառնարանները մեծղի գանգուածներ ըլլալով, անկարելի էր գանոնք շալկած շուկայ իջնել, ապա թէ ոչ՝ Նոյնիսկ բարձրորակ պայուսակ շալկած տիկիններ, որոնք դժբախտաբար, սակայն՝ սառնարան ունենալու չափ բարեկեցիկ չէին տակաւին, պիտի տուցում կ'ընէին:

Առ հասարակ ամէն տուն տախտակէ շինուած՝ շատ ատեն թիթեղածածկ՝ բնական (ոչ ելեկտրական) սառցատուփ մը ունէր: Նման տուփերու տէրերը ամէն օր պախալ Անդոյն սառի կտոր մը կը գնէին եւ կը գետեղէին սառցատուփին մէջ: Տուփին պաղ միջավայրին մէջ գոլ կը պահուէին Զալեպի ամառուան տօթին չրիմացող ուտելիքները: Անոնց մէջ տեղ կը տրուէր նաեւ ջուրով կամ օշարակով լեցուն շիշերու, ինչպէս նաեւ բնածխատուած՝ պղպշակաւոր գոլացուցիչներու, որոնցմէ կը յիշեմ տեղական՝ Լէյլա մակնիշի՝ կարմիր, կանաչ, դեղին կամ անագոյն գոլացուցիչները: Զոն նաեւ կարելի էր գտնել ներածուած պղպշակաւորներ, ինչպէս՝ անգլիական կարմիր Սթիմը, իտալական ոսկեգոյն Փորթիլլոն ամերիկեան նարըն-ջագոյն Գրաշը եւ անգոյն Պիւպլ Ափը (Պապլ Ափ), որուն բնավայրին ծանօթ չեմ: Սկիզբները Գոգա Գոլա ամերիկեան պղպշակաւորն ալ կար, բայց որոշ թէ անորոշ պատճառներով օր մըն ալ մէջտեղէն չբացաւ: Իսկ Փեփսի Գոլային ռնգախտի դոլորշիին հոտը եւ քմախորժ համը վայելելու համար դէպի Պէյրուս ուղեւորութիւն մը հարկաւոր էր: Կեսօրուն դադարին արհեստանոցներէն ճաշելու եւ քիչ մը քնանալու համար տուն վերադարձող ամուսիններն ու զաւակները իրենց ճաշին հետ կը վայելէին գոլ ջուր, օշարակ կամ պղպշակաւոր գոլացուցիչ մը:

Անդոյին քով աշկերտի պարտականութիւններէս մին սառոյցի խոշոր կաղապարները սղոցել եւ յաճախորդներու յանձնարարած քանակով՝ սառի աւելի փոքր բեկորներ պատրաստելն էր: Սկիզբը ձեռնաշխատ սղոցով կը կատարուէր սառոյցի լման կաղապարին մասնատումը: Ատեն մը ետք պարոն Անդրանիկ ելեկտրականութեամբ աշխատող սղոց մը գնեց: Զայ արհեստաւոր մը յղացած եւ գործադրած էր ծրագիրը: Ականջի թմբուկ ծակող այնպիսի գիլ ճիչ մը բարձրացաւ, երբ պարոն Անդրանիկ ամառային անգամ ելեկտրական կոծակը սեղմեց եւ կլորակ սղոցին հատու ատամները սկսան սառը փեռել, որ երկու թաղ անդին ժողովուրդը դուրս թափեցաւ տեսնելու, թէ ո՞վ է մորթուողը:

Պարտականութիւններուս ամէնէն կարեւորը եւ ամէնէն շատ ժամանակ պահանջողը սառ մատակարարելու համար ձեռնափոխուած եւ յարմարեցուած հեծանիւղով՝ շորջապատի շատ մը ճաշարաններուն, սրճարաններուն, գինետներուն եւ լողաւազաններուն սառ մատակարարելն էր: Այդ հաստատութիւններէն ոմանք հանրութեան ծանօթ էին իրենց տէրերու խայտաբղետ անուններով, ինչպէս՝ Լանդըր Յաղուպին սրճարանը, Ղարա Տայըրին ճաշարանը, Մատթէս Յաղուպին գինետունը, Ղարա Յուսուֆին ճաշարանը, եւ այլ: Կային նաեւ իրենց տէրերուն աւազանի անունով ծանօթ հաստատութիւններ, որոնցմէ՝ Չատիկին սրճարանը, Սահակին սրճարանը, Ղազարին եւ իր եղբոր՝ Ճա-

Պրիսմակետ

ՏԻԿԻՆ ԲԱԹՐԻՆԸ



Մարուշ Երամեան

Ճերմակ մազերը ետեւ սանտրուած ու ծոծրակին վրայ ամփոփուած, ինք՝ երկարահասակ ու թիկնեղ, դեմքը կնճիռներով լեցուն եւ աչքը՝ կապոյտ, կաս-կապոյտ, այնքան կապոյտ, որ ամեն նայելուս կը յիշէի «Աստուածաշնչական Պատմութիւններ» ուն մէջ կարդացած «Լոյսի Կաթիլը» պատմուածքը, որ նոր կարդացեր էի: Աչքը կ'ըսեմ, որովհետեւ տիկին Բաթրինը միակակն էր, միւսին կոպերը փակ էին, չեմ գիտեր ի ծնէ՞ թէ արկածի մը հետեւեանքով:

Տիկին Բաթրինը, Հայկազ Վերժին Կիւլպենկեան մայրանոցի գլխավոր մանկաբարձուհին, վկայեալ էր Պեյրուֆի Ամերիկեան Համալսարանէն (AUB):

Ասկէ գրեթէ դար մը առաջ, ուրեմն եղած են տիկ. Բաթրինին պէս օրիորդներ, որոնք իրենց ընտանիքը ձգած, գացեր են Պեյրուֆ, համալսարանական ուսումի:

Տիկ. Բաթրինը, հակառակ իր միակակն ըլլալուն, կը հմայեր զիս իր մէկ աչքին խենթանալիք կապոյտով՝ յստակ, թափանցիկ կապոյտ մը, որ նոյնքան վախ կը պատճառէր ինձի, որքան հմայք, սարսափելի հմայք:

Եւ ծերութեամբ: Ծատ ծեր էր ու ես կը գարմանայի թէ ինչպէ՛ս կ'աշխատի, ինչպէ՛ս կրնայ նոր ծնած պէտքերը իր ճմռթկուած ձեռքերուն մէջ պահել: Չէի տեսած որ ձեռքերը կը դողան, բայց կարդացեր էի եւ անելի առաջ ալ տպաւորուէր էի Հայկանոյշ Աւետիսեանի ձեռքերէն, որ բոլոր ծերերուն ձեռքերը կը դողան: Տիկին Բաթրինին ձեռքերը չէին դողար եւ հակառակ շատ ճմռթկուած ըլլալուն, շատ ուժեղ ձեռքեր էին, ճի՛շդ ձայնին պէս, երբ կը բարկանար սխալ մը ըրած *Նըրսի* մը կամ աշխատաւորի մը վրայ, բերնէն թրջախառն հայերէնին հետ թուքեր ալ թափելով:



Տիկին Բաթրինը հայերէնէն անելի թրջերէն գիտեր ու կը խօսեր, նոյնիսկ երբ ժողովարան կ'երթար աղօթելու իր հոգեւոր քոյրերուն հետ, բոլորն ալ իր նման ծեր ու ճմռթկուած կիներ, որոնց հոտը չեմ կրնար մոռնալ:

Կը նստէի մայրանոցին *պէտքերուն* սենեակին պատուհանին մէջ, որ դէպի ետեւի թաղի ժողովարանը կը նայեր ու մտիկ կ'ընէի իրենց թրջերէն երգերը, որոնք թէւ աղօթքներ են, կ'ըսէին, բայց ոչ մէկ կապ ունէին մեր եկեղեցւոյ շարականներուն հետ, որոնք կը շոյէին քունքերս ամեն Շաբաթ կէսօրէ ետքերը, երբ մօրս քեռկինին՝ Մարթիալոս Լուարդին հետ եկեղեցի կ'երթայի: Շարականներն ու խունկը կը շոյէին ունկս, քունքս ու այտերս եւ աչքաբաց երազանքի երանութիւն կու տային: Մարթիալոս թոյլ չէր տար որ աչքերս փակեմ. կուշտս կը մխտեր եւ շշուկով կ'ըսէր՝ «*Հետեւի՛ր աղօթքներուն, որ սորվիս*»:

Հինգ տարեկան էի: Պատուհանին մէջ նստած, մտիկ ընելով այդ ծեր ու հոտած կիներուն բաղաձայն երգը, կը փորձէի հասկնալ թէ ինչո՞ւ թրջերէն կ'երգեն, կը խօսին ու մանաւանդ թրջերէն կ'աղօթեն, եթէ հայ են, ու յետոյ՝ ինչո՞ւ այսպէս տիպած են իրենց երգերը եւ ԲՆԱԿ չեն նմանիր մեր եկեղեցիին քաղցր շարականներուն:

Նստած կը մնայի երկար ժամանակ, այս հարցումներուն պատասխան փնտռելով, որովհետեւ չկար մէկը որուն հարցնէի. շուրջս գտնուող բոլոր մեծերը կա՛մ շատ գբաղած էին, կամ ալ չէին գիտեր հարցումներուն պատասխանները:

– Ե հայերէն չեն գիտեր, – կ'ըսէր մայրանոցի խոհարարուհին՝ Մարոշիկը, որուն նեղ աչքերն ու կարճ հասակը մտածել տուած էին որ չի-նացի կին մըն է, բախտի գարմանալի մէկ խաղով Հայկազ Նոր Գիւղի Կիւլպենկեան մայրանոցը ինկած, որպէս խոհարարուհի:

Հակառակ խորշանքիս, – շատ գօրաւոր էր աղօթարանէն փչող հին մարմինի եւ աղտոտ լաթերու հոտը, – ամեն Կիրակի առաւօտ կը վազէի *պէտքերուն* սենեակին պատուհանը, հանգիստ կը տեղաւորուէի եւ լրջօրէն մտիկ կ'ընէի այդ բաղաձայն երգերը:

Ինչո՞ւ: Չեմ գիտեր: Մայրս կ'ըսէր թէ Վերժին Կիւլպենկեան մայրանոցը ամբողջ Սփիւռքի միակ մայրանոցն է, որ հիւանդանոց չէ եւ նուիրուած է միայն ու միայն ծննդաբերող մայրերու բարօրութեան:

Մայրանոցը հիմնուած է 1935 թուականին, հանրածանօթ Գալուստ Կիւլպենկեանի Սերովբէ հօրեղբօր որդւոյն՝ Պատրիկի կողմէ, ի յիշա-

ՊԱՆԱԿ...

Սկիզբ՝ 12 6

Նոյին (կամ Ժանոյին) նաեւ Յակոբին սանտուիչի խանութները, Մասպահ (ջրաւազան) Ֆարուղը, Մասպահ Հալապը, եւ անելի նոր՝ Մասպահ Բապին: Մասպահ Ֆարուղէն քիչ մը դէպի արեւմուտք՝ Աճուր Թարլա տանող ճամբուն վրայ ուրիշ լողարան մըն ալ կար՝ Մասպահ Փաշա (արաբերէնով՝ Պաշա), որ Անդոյէն սառ չէր գներ եւ ուներ շատ փոքր թիւով հայ յաճախորդներ:

Անոն ուներ երկրորդ աշկերտ մըն ալ՝ Գօգօն, որուն ընտանիքին՝ պատուական Գարակաւուրեաններուն հետ դրկից էինք: Գօգօն նաեւ ամենօրեայ խաղընկերս էր: Այդ հաստատութիւնները անսառ չձգելու յոյժ կարեւոր գործը վստահուած էր Գօգոյին եւ ինձի: Փոխն ի փոխ հեծանիւ կը քշէինք: Չքշողը՝ ետեւի անիւնի վերեւը շինուած երկաթե ակապիտի դուրսի երկու կողմերէն բռնած՝ հեծանիւն ետեւէն կը վազէր: Ափսէին վրայ սառի երեք մեծ կահապար կարելի էր բեռնել: Ետեւէն վազողին կը վստահուէր հսկայ կահապարները ակապիտ վար գլորուելու փորձութենէն հեռու պահելու՝ ստեպ թեական յաջողութեամբ գլուխ հանուող՝ գերմարդկային սղիւրանքը, մանաւանդ՝ Մասպահ Հալապ հանող ցից գառիվերին վրայ:

Սառ փոխարդելու սկսելէ առաջ ամեն առտու Գօգօն եւ ես պէտք է խանութը աւելինք, կանաչեղէններու եւ պտուղներու սնտուկները համադրէինք, դարակներուն վրայի ապրանքները դասաւորէինք եւ ընդհանրապէս կարելի եղածին չափ կրկիկ ու մաքուր երեւոյթ մը տայինք պարուն Անդրանիկին եւ տիկին Ազնիւին խանութին: Այդ պահերուն առիթ կ'ունենայի յաճախորդ տիկիններու խօսակցութիւնը լսելու:

– Ազնիւ, մարուլին հատը քանի՞ է:

– Չորս ֆրանկ:

Հարցնող կինը քովը կարգի սպասող կնոջ կողմը կը դարձնէ գլուխը:

– Ամանքա, երկերկու ֆրանկ էր, այսօր երեք ֆրանկի էլ էր է. ասանկ էրթայ նէ, մէկ երկու շաբաթէն երկիս բոլոր շահածը Անդրոյին գրպանը պիտի մտնէ:

Ուրիշ կին մը իմաստալից ժպիտ մը դեմքին՝ աչքին ծայրով քովի կնոջ կը նայի եւ պարուն Անդրանիկին կը հարցնէ:

– Անթօ, լոյկին քիլօն քանի՞ էլաւ:

– Զանիի մանիի չէլաւ, դեռ քառորդ թուղթ է:

Ուրիշ մը Անդրոյին հարց կու տայ:

– Պարուն Անդրանիկ կանանկ

Ֆասուլիային քիլօն քանի՞ է:
– Տասը ֆրանկ:
– Պարուն Անդրանիկ, ի՞նչ է Ռուսերուն երկինք նետած սարուխներուն հետ մրցումի մը՞ էլ էր ես, որ առանց կենալու գիներդ վեր կ'ելլեն է:

Պարուն Անդրանիկ գլուխը ծռած՝ ուրիշ յաճախորդի մը գնելիք տոպրակ մը խնձորը կշռելով գբաղած է, կը լսէ սարուխներու մասին եղած հեգնական դիտողութիւնը, բայց չլսել կը ձեւացնէ:

Եւ այսպէս, առաւօտէն մինչեւ իրիկուն տիկին Ազնիւ եւ պարուն Անդրանիկ կը լսեն յաճախորդներու հարցումներն ու գանգատները, քիչ մը կը նեղուին, քիչ մը կը խնդան, քիչ մը կը գանգատին:

– Ազնիւ, ըսէ՛ տեսնեմ, մենք ի՞նչ կրնանք ընել, երբ մեզի մեծաքանակ ծախողները իրենց կանաչեղէններուն, պտուղներուն, ծիթախղին, կազոգներուն, հալալային, ռուպին, թահինին, պաստեղին, հակիթին... ամեն բանին գիները կը բարձրացնեն: Մենք ալ, եթէ մեր գիները համեմատաբար չաւելցնենք, թո՛ւկ կը նետենք, տիկին Ազնիւին հարց կու տայ պարուն Անդրանիկ...

– Ամա՛ն մարդս, վնաս չունի, շատ մի՛ մտահոգուիր մեր յաճախորդներուն ըսածներով. մաքուր սիրտով կ'ըսեն, եթէ քիչ մը քեզի կը քաջըջեն, ատ ալ քեզի սիրելուն համար է... Յետոյ, վերջին տոպրակին վրայ անոր տիրոջ անուան արձանագրութիւնը հագիւ աւարտած՝ խօսքը ինձի կ'ուղղէ տիկին Ազնիւ:

– Արա, եկո՛ւր տեսնեմ, այս տոպրակները ա՛ն իրենց տերերուն տունը տար, անունները վրան գրեր եմ, գիտցած մարդիկդ են, ամեն իրիկուան պէս...

Տոպրակները կ'աննեմ տիկին Ազնիւէն, հեծանիւն ետեւի ակապիտ մէջ կը տեղաւորեմ ու ճամբայ կ'ելլեմ: Մէկիկ մէկիկ կը յանձնեմ իրենց «տերերուն»: Մէկուն՝ տոպրակ մը լուբիկ, միւսին տոպրակ մը խնձոր, լոյկիկ, սմբուկ, քիչ մը հալաւ, քիչ մը ձաւար, եւ այլն, եւ այլն... Ամեն իրիկուն տիկին Ազնիւ շրջապատի չքաւոր ընտանիքներուն կը բաժնետոպրակներով լեցուն ու տեղիքներ: Նոր Գիւղի սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եւ սուրբ Գեորգ եկեղեցիներու խորանէն կամ Բեթէլ ժողովարանի ամպիոնէն (Չուարթնոցը չէր շինուած տակաւին) արտասանուած բարեսիրութեան ո՞ր քարոզը պիտի կարենար մրցիլ տիկին Ազնիւի անխօս քարոզին հետ, որ կազմաւորման տարիքի տղու մը մատղաշ սրտին մէջ բարեսիրութեան եւ մարդասիրութեան ծիլեր կը փթթեցնէր:

ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ
Չուարթնոց վարժարանը կարիքը ունի հետեւեալ պաշտօններուն.
- Միջնակարգի անգլերէնի ուսուցիչի,
- Մանկապարտեզի ուսուցչուհիի,
- Տնտես-մայրիկի:
Փափաքողները կրնան ներկայանալ Չուարթնոց վարժարան երկուշաբթի եւ երեքշաբթի օրերը:
Հեռաձայն. 4644104 - 0947 787260:

ԵԱԳՈՒՊԻԷ, ԱՊՐՈՒԱԾ ՕՐԵՐՈՒ ՅՈՒՇԵՐ - ՍՈՒՐԲ ԱՆՆԱ



Դոկտ. Արամ Սահյան

Տեղահանութեան տասնամեակ
Արտասովոր մթնոլորտի, բըխրուն եւ վտանգաւոր պայմաններու մէջ կիրակի 26 Օգոստոս 2012-ին կատարուեցաւ Եագուպիէի Ս. Աննա եկեղեցւոյ մէջ հրաշագործ սուրբին նուիրուած պատարագը, վերջին ուխտագնացութիւնը, շատ համեստ տօնակատարութիւնը: Եագուպիէի Սուրբ Աննա եկեղեցւոյ ուխտավայրը, յատկապէս եւ անմոռանալի հայկական ուխտավայրերէն մէկն էր վերջին դարու Սուրիահայ իրականութեան մէջ:

Տասը տարի անցած է 2012 թուականէն, ուր լսելի չէն Սուրիոյ հիւսիս-արեւմուտքը գտնուող Իտլիյա նահանգի վարչական տարածքին մէջ եւ թուրքիոյ սահմանամերձ Եագուպիէ հայկական գիւղի Ս. Աննա եկեղեցւոյ շատ մասնայատուկ զանգի զնգզնգոցը: Լռած են ուխտատէրի Ս. Աննայի խորհրդաւոր մատուցէն հաւաքական աղօթքներուն մրմունջները, Եկեղեցւոյ բարձրախօսներէն մինչեւ ձորեաններ լսուող պատարագի աղօթքներն ու շարականները: Չեն լսուիր հրաշագործ Ս. Աննայէն օրհնութիւններ խնդրողներուն աղերսները, թախանձագին աղաչանքները: Յուշեր են նաեւ Ս. Աննա եկեղեցւոյ մէջ, թէ եկեղեցւոյ շրջափակին եւ կողքին գտնուող եկեղեցապատկան բարիքի խորհրդանիշ՝ ձիթաստաններու մէջ ուխտագնացութեան առիթով վրաններ լարած եւ իբրեւ ուխտաւոր գիշերողներուն ապրուած յիշատակները: Ուխտաւորներ, որոնք նախօրոք արձանագրուած եւ յատուկ տեղ գրաւած ու եկեղեցւոյ թաղականութենէն արտօնութիւն անած կ'ըլլային եկեղեցւոյ մէջ գիշերելու, ըլլան անոնք սուրիահայեր թէ Սփիւռքի զանազան գաղութներէն ժամանած հայորդի ուխտաւորներ, քրիստոնէայ զանազան համայնքներու զաւակներ, նոյնիսկ ոչ քրիստոնէայ ուխտաւորներ: Տեղի չեն ունենար բերքօրհնէքի, Ս. Աստուածածնայ վերափոխման տօնին առիթով ոսկեհամ խաղողի օրհնութիւնը: Չի կատարուիր Օգոստոսի վերջին Շաբաթ օրուան մատաղներուն գեներալ, յաջորդող Կիրակի օրուայ հաւատացեալներուն եռուգերը, հոծ բազմութեամբ օրուան առաջնորդին եւ ազգայիններու շքախումբին մասնակցութեամբ Ս. Աննային նուիրուած Կիրակի պատարագէն ետք մատաղօրհնէքը, անանդական համեղ հերիսան, ժողովրդային տօնախմբութիւնը:

Իբրեւ հալեպահայ, ինչ-ինչ յիշատակներ կը վերագծուին, կը վերակենդանանան յիշողութեանս մէջ, վերջիվերջով եւ յուշագրելով հայկական Եագուպիէի կենսապատուճը, լուսարձակի տակ առնելով անցեալի ապրուած օրերու պատկերաշարանի մը մանրապատումները, Ս. Աննայի նուիրուած աւիշով լեցուն Օգոստոս ամսուն վերջին Շաբաթը, նոյն ամսուն վերջին Շաբաթ եւ Կիրակի օրերը եւ կամ այլ առիթ-

ներ, եւթաուրտներ: Մտքիս մէջ կը տողանցեն այդ գիւղին մէջ բնակուած, հայկական հետքերով համակուած երկար տարիներու անդարձ բայց հայկապ անցեալի տաքաշունչ յիշատակներ, որոնք անհնար է չիշել, անոնք մտքիս մէջ անհատում նիւթերու դռներ կը բանան:

Այդ գիւղին մէջ հայկական հետքերու փճացումը, քանդումը մեզ կը մղէ դէպի անցեալ վերադառնալու եւ վերարտադրելու հաւաքական ինքնութեան ծալքերը, հաւատալով որ յիշողութիւնը ինքնութիւն է, սփիւռքահայ մարդուն համար յիշողութիւնը առանցքային մէկ բաժինն է, իսկ յիշելը տառապաւն է:

Գլխաւորաբար ժողովրդավարութեան լուրջ ունեցող պատրանքներով, կեղծ ու միջագային դաւադրութեամբ մը բոցավառող արաբական զարուհը 15 Մարտ 2011-ին Սուրիա այցելեց: Աննախատեսելի տագնապ մը ծայր առաւ եւ տարածուեցաւ Սուրիոյ ամբողջ տարածքին հասնելով մինչեւ երկրի հիւսիսային հեռաւոր Եագուպիէի ծայրամասը, որ անբաժին չմնաց այդ մղձաւանջէն, տառապեցնող եւ քստմտելի անկունադարձ մը արձանագրեց, որ տակաւին կը շարունակուի Եագուպիէի պատմութեան մէջ:

Սուրիական պետական բանակը, որ ճսրը Շոլոր գիւղաքաղաքէն դէպի հիւսիս իր դիրքերը ամրապնդած էր, մինչեւ Եագուպիէ, Զընայէ եւ Ճտէյտէ շրջանին մէջ, իրարու շատ մօտիկ թուրքիոյ սահմանամերձ երեք քրիստոնէայ արաբախօս գիւղեր: Սուրիական պետական բանակը ձեռնով մը երաշխիք էր ու պաշտպան, թե ու թիկունք կը համարուէր այդ շրջանի Սուրիոյ պետութեան հովանաւորութիւնը եւ անվտանգութիւնը վայելող բնակիչներուն համար, անոնք մէջ ըլլալով նաեւ Եագուպիէի հայերը:

Սուրիական բանակը գիւղուրական լայնածաւալ գործողութիւններու ձեռնարկած էր՝ ազատագրելու Իտլիյա նահանգը, այդ շրջանի գիւղերն ու տարածքները «Ճապահաթ ալ Նուսրա»-ի եւ տարբեր անուններով գիւղեալ ահաբեկչական խմբաւորումներէն: Իտլիյա նահանգը դարձած էր արաբ եւ զանազան ազգութիւններէ մոլեռանդ վարձական ահաբեկիչներէ, կրօնամոլ իսլամականներէ կազմուած ահաբեկչական խմբաւորումներուն կեդրոնական հաւաքավայրը: Ընդդիմադիր եւ հակապետական խմբաւորումներուն հիմնական լոգուքն էր ժողովրդավարութիւնը, իսկ գլխաւոր նպատակն էր տապալել իշխանութիւնը եւ Սուրիան ազատագրել իշխող վարչակազմէն:

Բնականաբար այս իրականութեան դիմաց, պետական բանակը

արհեստի բախումներ ունեցաւ ճսրը Շոլորի եւ ընդհանրապէս այդ շրջանի ընդդիմադիր ահաբեկչական շրջաններու գիւղեալներուն հետ, որոնք ճկունութիւնը ունէին արագ մը փոխադրուելու եւ փախուստի դիմելու դէպի սահմանամերձ թուրքիոյ հարաւային շրջանները: Տուեալ սահմանաբաժնի աշխարհագրական լեռնային շրջաններու պայմաններուն մէջ, ահաբեկիչներու վայրագութիւնները անելի հեզասահ կ'ընթանային, որով անոնք արագ ձեռով կ'իրագործէին իրենց պղծութիւնները, ոճրագործութիւնները եւ ապա կը պատսպարուէին թուրքիոյ իրենց բանակավայրերուն մէջ, ուր կը վայելէին թրջական իշխանութիւններու թոյլտուութիւնն ու հովանաւորութիւնը իբրեւ թուրքիոյ վարձկան խմբաւորումներ: Այնքան ատեն որ թուրքիա երբեք չէր ընդդիմացած այդ ահաբեկիչ խմբաւորումներու մարտավարութենէն կամ չէր գանգատած անոնց ներկայութենէն: Ի վերջոյ կոչուներու երկար այս մակընթացութիւններէն ետք, գիւղեալ ահաբեկիչ խմբաւորումները օր ըստ օր անելի ուժեղանալով կարողացան գերիշխել այդ շրջաններուն վրայ:



«Ճապահաթ Նուսրա» մարդկային եւ կրօնական անհանդուրժութեամբ, կրօնական տարրական իրաւունքներու եւ ազատութիւններու կաշկանդման ու ոտնակոխման թշնամական իր վարքագիծը տարածեց ամբողջ Իտլիյա շրջաններուն մէջ: Չնոստուող քրիստոնէայ փոքրամասնութեան դիմաց երկու ելք կը մնար՝ եւթաբեկիչ ահաբեկիչներուն բռնատիրական եւ իսլամական օրէնքներու գերիշխանութեան, հրաժարելով սեփական կրօնական եւ ազգային ինքնութենէն եւ իրաւունքներէն՝ ապրելու սիրոյն իր հողերուն վրայ եւ կամ լքելու իր դարաւոր հողերը, կալուածներն ու արտերը եւ հեռանալու՝ փրկելու համար իր գոյութիւնը:

Ռազմական, անկայուն եւ անապահով այս իրավիճակը, օրե օր կրօնական եւ մարդկային ուռճացող աղէտը եւ մանաւանդ արհեստաւոր ծայրայեղականներու կողմէ սպառնացող գոյութեան կտրուկները պարտադրեցին, որ Եագուպիէի բոլոր զաւակները, մանաւանդ երիտասարդութիւնը դիմեն տեղահանութեան, արագ լքելու եւ հեռանալու իրենց տուններէն, կալուածներէն եւ մանաւանդ ապրուստի աղբիւրէն՝ ձիթաստաններէն, պտղատու այգիներէն ու բարեբեր արտերէն:

Սուրիական պետական բանակն ալ, որ Յունիս 2011-ին, հիւսիսային տարածքները եւ Եագուպի-

էի շրջանները պաշտպանելու համար հոն ինքզինք ամրապնդած էր, պարտադրաբար նահանջեց հեռանալով Եագուպիէ գիւղէն 27 Յունուար 2013-ին եւ իր դիրքերը գիւղեցաւ Իտլիյաի շրջանին մէջ Թուրքիոյ հովանաւորութիւնը վայելող եւ իսլամական մոլեռանդ օրէնքները գործադրող ծայրայեղական ահաբեկչական «Ճապահաթ Նուսրա»-ին, որ Եագուպիէ մտաւ եւ իր դիրքերը ամրապնդեց 29 Յունուար 2013-ին եւ գէնքի բռնի ուժով ամբողջ շրջանը իր իշխանութեան եւ հակաշրջանի տակ առաւ: Ուստի երբ Եագուպիէն եւ մերձակայ շրջանները գրաւուեցան ծայրայեղ իսլամականներէն ու անոնց համակիրներուն կողմէ, այդ խուժանները սկսան յարձակիլ քրիստոնէայ գիւղերուն վրայ եւ ներխուժել տեղացիներուն բնակարանները: Ահաբեկիչներուն գիւղ մտնելէն ետք, գիւղը ամբողջութեամբ դատարկուեցաւ, բնիկները կականջ տեղահան դարձան, անոնց տեղ ահաբեկչական խմբաւորումները արաբ ու թուրքմէն ընտանիքներ բնակեցուցին: Դառն աղէտէն ստիպողաբար հեռացողները մեծ գոհողութիւններով, անյայտ ու խոպան ճանապարհներով երկար ճամբորդութենէ ետք կարողացան Զալէպ, Լաթաքիա հասնիլ: Աւելի քան տասնեակ մը Եագուպիէի ընտանիքներ հաստատուեցան նաեւ Զեսապի մէջ:

Այսօր հազիւ տասնեակ մը անկար ծերունիներ կը շարունակեն սեփական հողի վրայ հարկադրաբար, նուաստացուցիչ եւ կծու պայմաններու տակ դառնութեամբ ապրիլ Եագուպիէի մէջ, զրկուած են արդար, խաղաղ ու հանգիստ ծերութիւնը վայելելու իրաւունքէն:

Անպաշտպան մնացած էր նաեւ Եագուպիէի միակ հոգեւոր հովիւ բնիկ Եագուպիէի Տէր Վարդան քին: Մարտիրոսեանը: Եագուպիէի մէջ քսան երկար տարիներու եկեղեցանուէր իր ծառայութենէն ետք, ինք եւ երեցկիւր բնիկ Եագուպիէի՝ Չարուհի Պայտուն (Ճերմակեան) ի եւ իր զաւակներուն հետ, պարտադրաբար 12 Դեկտեմբեր 2012-ին կը ստիպուին լքել գեղատեսիլ բնութեամբ Եագուպիէն, Ս. Աննա եւ Ս. Յովիսիմէ հայ առաքելական երկու եկեղեցիները, ազգապատկան կալուածները եւ մանաւանդ ազգապահպանման հիմնական սիւնը՝ «Վերածնունդ» հայ վարժարանը, որ հիմնուած է 1929-ին եւ կը հեռանան հոգեհարազատ ծննդավայր՝ Եագուպիէն:

Այսօր, Սուրիոյ տագնապը բոլորած է իր տասնամեակը, սակայն Եագուպիէն չէ ազատագրուած, ուխտապահ Եագուպիէիները տուն ու գիւղ չեն վերադարձած: Գեռու են իրենց նուիրական օճախներէն, ճակատագրի անարդար վճիռը զիրենք գիւղէն եւ իրարմէ հեռացուցած է, ամէն օր քիչ մը անելի կը հեռանան նոր սերունդին փոխանցելու իրենց տոհմիկ բարքերը, սեփական անանդոյթներն ու սովորութիւնները, բայց սպասումի մէջ են: Չեն կորսնցուցած վերադարձի յոյսը, համոզուած են, որ օր մը գիւղ պիտի վերադառնան, վերականգնեն ու վերանորոգեն իրենց օճախները, հաւատալով մանաւանդ հրաշագործ Ս. Աննայի նուիրաւոր գործութեան:


Թուրքիոյ նուրջ

ԹՈՒՐԷ ԲԱՐՉՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՆԵԱՆ ՄԵՎՆԱԲԱՆԱԾԷ ՀԱՅ-ԹՐԵՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԽՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆ

«Էրմենիհապեր»- Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան բարձրաստիճան պաշտօնեան մեկնաբանած է Թուրքիա-Յայաստան յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը: Թրքական լրատուամիջոցները չեն հրապարակած այդ պաշտօնեային անուն-մականունը:

Նշելով, որ Յայաստանի ու Թուրքիոյ յատուկ ներկայացուցիչները համաձայնած են կարգաւորման գործընթացը առաջ մղել քայլ առ քայլ՝ պաշտօնեան ըսած է. «Ներկայիս հայ-թրքական յարաբերութիւններուն իրավիճակը ցանկայի պատկերը չէ, եւ անհրաժեշտ է ջանքեր գործադրել, որպէսզի ան վերածուի ցանկայի»:

Ըստ յիշեալ պաշտօնեային, երկու երկիրներու յատուկ ներկայացուցիչները կ'աշխատին վստահութեան ամրապնդման միջոցներ գտնելու: Անորադառնալով օդային բեռնափոխադրումներու իրականացումին, ան դիտել տուած է, որ 2 երկիրներու իշխանութիւնները քննարկելու բազմաթիւ թեքիք մանրամասնութիւններ ունին:



Չմեռնային պայմաններու մէջ անցակէտերու ենթակառոցներու վերականգնումի աշխատանքներուն առնչուող առկայ դժուարութիւններուն անդրադառնալով ան ըսած է.

«Անիի ակերակներու պատմական Մետաքսի ճանապարհի կամուրջին մէկ ոտքը կը գտնուի Յայաստան, միւս ոտքը՝ Թուրքիա. ան քանդուած է ռուս զինուորներու կողմէ 1877-1878 տարիներու պատերազմի առնէ»:

Անոր վերանորոգումը վստահութեան բարձրացման միտումած շատ լուրջ քայլ կրնայ ըլլալ: Այս բոլորին իրականացման համար պէտք է կլիման յարմար ըլլայ: Չմրան ամիսներուն նման բան կարելի չէ նախաձեռնել»:

Պաշտօնեան յայտնած է նաեւ, որ Թուրքիոյ նպատակը ոչ միայն Թուրքիա, - Յայաստան կամ Ատրպէյճան, - Յայաստան յարաբերութիւններու կարգաւորումն է, այլեւ տարածաշրջանին մէջ կայուն խաղաղութեան եւ կայունութեան ապահովումը:

Անորադառնալով այժմ Վրաստանի տարածքով Յայաստանի եւ Թուրքիոյ միջեւ իրականացուող առեւտուրի հանգամանքին՝ ան դիտել տուած է, որ առեւտուրի ուղիղ իրականացումը Յայաստանի տնտեսութեան վրայ դրական ազդեցութիւն կ'ունենայ:

«Մենք Յայաստանի հետ ունինք տարեկան շուրջ 230 միլիոն տոլարի առեւտուր: Այդ առեւտուրը կ'իրականանայ Վրաստանով մօտ 15 հազար բեռնատարով: Կը կարծեմ, որ պէտք է հաշուի առնել, թէ առեւտուրի ուղիղ իրականացումը դրական ինչ ազդեցութիւն կ'ունենայ Յայաստանի տրնտեսական կենսքին վրայ, հետեւաբար Յայաստան պէտք է անելի կառուցողական դիրքորոշում որդեգրէ»:

Թուրքիոյ համար 230 միլիոն տոլարը շատ մեծ գումար չէ, չեմ գիտեր թէ ատիկա մեր արտաքին առեւտուրի քանի օրուան կը համապատասխանէ, բայց ի վերջոյ սահմանէն այն կողմ Երեւանն է՝ 1 միլիոնէ անելի բնակչութեամբ, Աքեքայի դիմաց ալ Կիւմրիկն է: Եթէ 2 կողմերն ալ, անհրաժեշտ ճկունութիւն ցուցաբերեն եւ կարենան ապահովել յարաբերութիւններու դրական զարգացում, ինչ որ երկու կողմերուն համար ալ շահաւետ կ'ըլլայ»:

Նշելով, որ «Չանգեզուրի միջանցքի» բացումը կրնայ նոր այլընտրանքներ ստեղծել տարածաշրջանի կապուղիներուն իմաստով, պաշտօնեան ըսած է, որ անոր յաջող արդիւնքը դրական ազդեցութիւն կրնայ ունենալ նաեւ Թուրքիոյ վրայ:

Ըստ թուրք պաշտօնեային, Թուրքիա կը պնդէ, որ յաջորդ բանակցութիւնները տեղի ունենան Յայաստան, կամ Թուրքիա: Երրորդ երկրի մէջ հանդիպիլը անիմաստ է:

Ըստ անոր, Թուրքիա-Յայաստան յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին նկատմամբ հետաքրքրութիւնը շատ անելին է, քան Յայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին նկատմամբ՝ նկատի ունենալով այն դրական ազդեցութիւնը, որ հայ-թրքական յարաբերութիւնները կ'ունենան տարածաշրջանին վրայ:

Յայկական Սփիւռքի դերակատարութեան անդրադառնալով պաշտօնեան ըսած է, որ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին ընդդիմացող հայկական Սփիւռքն է, սակայն հայկական Սփիւռքը միատարր կառոյց չէ, եւ Սփիւռքի մէջ Թուրքիա-Յայաստան կարգաւորման գործընթացին հակառակորդները պէտք չէ հանդէս գան ողջ Սփիւռքին անուով:

Ամփոփելով իր տեսակէտները՝ թուրք պաշտօնեան շեշտած է, որ Ռուսիա նոյնպէս կ'աշակցի հայ-թրքական յարաբերութիւններու կարգաւորման գործընթացին:

ՍՓԻՒՔԸ...

Սկիզբ՝ էջ 5

Երբ պատանի մը հասնի ինքնաշարժ վարելու տարիքին, մասնագետ մը անոր կը սորվեցնէ ինքնաշարժը կառավարելու գործնական ձեւերը, կու տայ նաեւ տեսական ծանօթութիւններ՝ ինքնաշարժին մասերուն վերաբերեալ: Թեկնածուին տրամադրութեան տակ կը դնեն ճամբաներու վրայ ի գօրու եղող օրէնքներու գրքոյկ մը, գոր վարորդը պէտք է իւրացնէ եւ համապատասխանաբար գրաւոր քննութիւն անցնէ: Տեսական եւ գործնական օրէնքներն ու վարժութիւնները ունենալով, անձը լիակատար վարորդ չ'ըլլար, այլ պէտք է որոշ ժամանակ փորձառութիւն ձեռք բերէ, որպէսզի ընդունելի վարորդի մը մակարդակը նուաճէ: Ո՛չ ոք կ'առարկէ նման դրութեան մը դեմ, եթէ կը ցանկայ ինքնաշարժ վարել: Իսկ ներկայ աշխարհին մէջ, ինքնաշարժ վարելը օդի, ջուրի եւ ճաշի չափ կարելու «կենսանիւթ» է: Երկրորդ օրինակը՝ տուեալ երկրի մը օրէնքներուն իմացումն է, անկախ անկէ, թէ այդ երկիրը ծննդավայրդ ու մշտական բնակավայրդ է, թէ հոն հասած ես իբրեւ գաղթականներ գաղթող: Այս պարագային ալ, կայ տարրական օրէնքներու, գիտելիքներու շարք մը, որուն իմացումը անխուսափելի հրամայական է եւ գիտելիքներու նուազագոյն պաշարը՝ տուեալ երկրին մէջ լուրջ հարցեր չ'դիմագրաւելու համար (իսկ ներգաղթողը, առանց անոնց իմացութեան, հպատակութիւն չի կրնար ձեռք բերել): Այլ խօսքով, սփիւռքեան մեր գաղութները, եթէ իսկապէս կը հաւատան, որ հայապահպանութեան անհրաժեշտ բան է մեր ազգի, գոնէ Սփիւռքի գոյատեւման ու զարգացման համար, պէտք է համակարգուած աշխատանք տանին, հասարակաց պահանջներու սահմանման ու արձանագրումին, ու անոնց հիմամբ՝ բազմապիսի ծրագիրներու (ոչ միայն ուսումնական-դաստիարակչական) մշակման համար: Կըրկնենք. իտեալական եւ անիրականաւ լի բաներու մասին չենք խօսիր, այլ որոշ դժուարութիւններ ունեցող, բայց ոչ անկարելի նախաձեռնութիւններու մասին:

Նման համատարած եւ հասարակաց ծրագիրներու մշակումը պիտի ունենայ բնական այն արդիւնքը, որ աշխարհի որեւէ երկրին կամ քաղաքին մէջ բնակող հայը ինքզինք կամրջած պիտի ըլլայ այլ երկիրներու մէջ բնակող հայերու, նա՛եւ մայր հայրենիքին հետ, պիտի գգայ ու ապրի իբրեւ մէկ մեծ ամբողջութեան մասնիկը, համահաւասար՝ այլ օճախներու հայերուն: Նման առաջադրանքի նախնական ու շօշափելի օրինակները կարելի է սեպել այն հանդիպումները, որոնք տեղի կ'ունենան տարբեր գաղութներէ Յայաստան այցելող երիտասարդական, սկաւտական եւ աշակերտական խմբակներու միջեւ փոխարարութեանց ու կապերու ստեղծումով: Ճիշդ է. կը խօսինք, արդէն, այլ տարածքի մը՝ Յայաստան-Սփիւռք տարածքին մէջ, սակայն կը կարծենք, որ այդ օրինակը տալով, անելի լաւ բացատրած կ'ըլլանք մեր առաջարկը, դիտաւորութիւնը: Նման ծրագիրներու հետեւողական կիրարկումով ու զարգացումով, փորձառութիւններէ բխող հարստացումով, առեն մը ետք սփիւռքեան միաւորներուն միջեւ տարբերութիւնները աստիճանաբար կը նուազին, փոխադարձ ճանաչողութիւնը կ'ունենայ բարերար ազդեցութիւն եւ ներգործութիւն: Այս իմաստով, որքան անելի բաղձալի պիտի ըլլար, որ Յայաստան-Սփիւռք համագումարները ըլլային ձեւակաւե-քարոզչական անոնց անցնող նախաձեռնութիւններ (հիմա անոնք ալ շոգիացած են), Յայաստան ունենար այս իմաստով Սփիւռքի հարցերու նախարարութիւն (վերջին տարիներուն նախարարութիւնն ալ նահանջած է գործակատարի մակարդակի), որուն առաքելութիւն տրուէր ոչ թէ սփիւռքեան գաղութներ «թափանցելու» (մէկ տարբերակը՝ խորհրդային տարիներուն ի գործ դրուած՝ տիրապետելու ծախս ճիգերուն), այլ Սփիւռքի ճանաչողութիւնն ու անոր հետ գործակցութիւնը հասցնել տարբեր եւ օգտաւետ մակարդակի: Լիբանան ունի այսպիսի առաքելութիւն ունեցող նախարարութիւն, Յայաստանի ունեցածն ալ զո՛հ գնաց «յեղափոխականներու քայլերթին»...

շար. 2

ՊԱՇՏՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Արամ Մանուկեան Ժողովրդային Տունը կարիքը ունի հետեւեալ պաշտօնեաներուն.

- Մատուցողի,
- Պահակի,
- Գինեպանի (Barman):

Փափաքողները կրնան ներկայանալ տնօրէնութեան, ամէն օր ժամը 12:00-էն մինչեւ 2:00:

Յեռաձայն՝ 4641881:

*ԱՄԺ Տան
Խնամակալութիւն*

ՊԱՇՏՏՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Ազգ. Միացեալ Նախակրթարանը 2022-2023 ուսումնական տարեշրջանին համար կարիքը ունի անգլերէնի դասատուներու:

Փափաքողները կրնան ներկայանալ վարժարան:

Յեռաձայն՝ 4644760:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

ԽՈՅ
Շաբաթը պիտի աւարտէք հոգեկան գոհունակութեամբ: Ձեր գործերը պիտի գնահատուին: Առողջապահական խնդիրներն ալ վերջապէս պիտի լուծուին:
- 

ՏՈՒԼ
Ձեր շուրջինները պիտի գնահատեն ձեր ընկերասիրութիւնն ու նուիրումը: Բազմատեսակ աշխատանքներ պիտի վարէք եւ հասնիք ձեր նպատակներուն:
- 

ԵՐԿՈՒՐԵԱԿ
Ձեր հեղինակութիւնը պիտի պարտադրէք եւ ուրախացնէք ձեր շուրջինները: Դեռաւոր բարեկամ մը անակնկալ նուէր պիտի ստանաք:
- 

ԽԵՅՉԵՏԻՆ
Ձեր ազատ կամքին ընդամաքելով հաստատ քայլեր պիտի առնէք եւ յամառ աշխատանքով ձեր երազները պիտի իրականացնէք:
- 

ԱՌԻԾ
Ձեր առողջութեան հոգ տարէ՛ք: Իմաստութեամբ վարուեցէ՛ք ձեր շուրջիններուն հետ: Ձեր բարկացկոտ նկարագիրը պատճառ պիտի դառնայ ձախողութեան:
- 

ԿՈՅՍ
Դուք հմայիչ էք եւ ձեր շրջապատին յարգանքին արժանի: Մի՛ ծանրաբեռնուիք դժուար գործերով: Շաբաթավերջին պիտի ունենաք հաճելի պտոյտ մը:
- 

ԿԵՒՈՔ
Երախտապարտ եղէ՛ք իւրաքանչիւր վայրկեանին, որ կ'անցընէք ձեր սիրելիներուն հետ: Կեանքը թանկարժէք է: Ձեր գործերը դասաւորեցէ՛ք եւ պիտի գնահատուիք:
- 

ԿԱՐԻՃ
Ձեր ուժեղ կամքին եւ կորովին շնորհիւ պիտի յաջողիք ձեր բոլոր գործերուն մէջ: Ձեր լուրջ ու խելացի նկարագիրը ձեզ պիտի ուղղէ նորաւոր բարձունքներ:
- 

ԱՂԵՂՆԱՌՐ
Ընթրիքի մը հրաւերին շուրջ կ'երկմոյժէք: Չուարճացէ՛ք ձեր բարեկամներուն հետ: Ձեր առողջութեան ալ հոգ տարէ՛ք հետեւելով մարզանքներու:
- 

ԱՅՏԵՂՋԻՐ
Շաբաթը լի է հաճելի անակընկալներով եւ բարեկամական հանդիպումներով: Օգտակար գործեր կատարեցէ՛ք: Լաւատես եղէ՛ք:
- 

ՋՐՅՈՍ
Այս շաբաթ ձեր ձեռնարկած նոր գործերը յաջողութեամբ պիտի պսակուին: Ինքնավստահ եղէ՛ք եւ ուրիշներու կարծիքներով մի՛ յառաջանաք:
- 

ՁՈՒԿ
Բարեկամի մը աջակցութիւնը նոր գործի մը առիթ պիտի տայ ձեզի: Չարգացուցէ՛ք ձեր հետաքրքրութիւնները եւ յարատեւելով իրականացուցէ՛ք ձեր երազները:



ԱՄԱՌՆԱՅԻՆ ԼԱԲԱԳՈՅՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ

Իտալական Polo Scolastico Paritario Don Bosco դպրոցի ուսուցիչ Չեզարե Կ'ատան որոշեց իր աշակերտներուն արձակուրդի չորկէ, այլ 15 կէտերէ բաղկացած շատ կարեւոր ամառնային առաջարկներ տալ անոնց: Առաջարկները Չեզարեն նաեւ յայտարարեց իր դիմատետրի էջով: Գրառումը տասնեակ հազարաւոր հաւանումներու արժանացաւ եւ ամբողջ աշխարհի չորս կողմերէն շուրջ 10 հազար օգտատէրեր բաժնեկցեցան անոր գրառումը իրենց էջերով:

Այս արձագանգին պատճառը այն էր, որ մինչ օրս ոչ մէկ ուսուցիչի մտքէն անցած էր նման հետաքրքրական արձակուրդային առաջարկներ յանձնարարել աշակերտներուն:

Ահաւասիկ այդ 15 թելադրանքերը:

1-Առաւօտեան քալեցէ՛ք ծովափին կամ պարտեզի մը մէջ առանձին, նայեցէ՛ք արեւի ցլքերուն կանաչապատ մարգագետիններուն կամ ջուրին վրայ, մտածեցէ՛ք, թէ ինչպէս կրնաք երջանիկ դառնալ:



2-Փորձեցէ՛ք օգտագործել նոր բառեր, որոնք սորված էք այս տարուան ընթացքին: Որքան շատ կրնաք արտայայտուիլ, այնքան հետաքրքրական կը դառնան ձեր միտքերը, իսկ որքան շատ միտքեր ունենաք, այնքան աւելի ազատ կը դառնաք:

3-Կարդացէ՛ք այնքան, որքան կրնաք: Բայց ոչ թէ առ ի պարտականութիւն: Կարդացէ՛ք, որովհետեւ ամառը երազանքներու եւ արկածներու համար է, իսկ կարդալը թռչելու պէս է: Կարդացէ՛ք, որովհետեւ ատիկա բողոքի լաւագոյն ձեւն է:

4-Խուսափեցէ՛ք այն բացասական միտքերէն ու ազդակներէն, իրերէ, մարդոցմէ, իրավիճակներէ: Փնտռեցէ՛ք ոգեշնչում եւ նոր ընկերներ, որոնք կը հարստացնեն ձեզ, կը հասկնան ու կը գնահատեն ձեզ:

5-Եթէ տխրութիւն կամ վախ կը զգաք, մի՛ անհանգստանաք: Ամառը, ինչպէս եւ աշխարհի մէջ ամեն հրաշալի բան, տակնուվրայ կ'ընէ հոգին: Անձնական օրագրութիւն պահեցէ՛ք: Գրեցէ՛ք ինչ որ կը զգաք: Իսկ եթէ կը փափաքիք, Սեպտեմբերին միասին կը կարդանք ձեր գրածները:

6-Պարեցէ՛ք եւ ոչ մէկ բանէ մի՛ ամբնաք, ոչ մէկ տեղ: Ամառը ուրախ պար մըն է, եւ յիմարութիւն է այդ պարին չմասնակցիլը:

7-Առնուազն մէկ անգամ արեւածագը դիմաւորեցէ՛ք: Լուռ կեցէ՛ք, խորունկ շունչ քաշեցէ՛ք, փակեցէ՛ք ձեր աչքերը եւ արտաշնչեցէ՛ք:

8-Մարզանքի հետեւեցէ՛ք:

9-Եթէ որեւէ մէկուն հանդէպ համակրանք զգաք, արտայայտուեցէ՛ք:

10-Վերընթերցեցէ՛ք դասերուն ընթացքին մեր կարդացած գիրքերուն մասին գրառումներ, համեմատե՛ք գանոնք մեր սորվածին հետ:

11- Եղէ՛ք արեւի շողին պէս երջանիկ եւ ծովուն պէս անսահման ու ազա՛տ:

12-Եղէ՛ք սիրալի՛ր ու բարի՛: Մի՛ օգտագործէք վատ բառեր:


13-Դիտեցէ՛ք լաւ ֆիլմեր, որպէսզի լաւացնէք թէ՛ հայերէնի, թէ՛ անգլերէնի իմացութիւնը, թէ՛ ալ զարգացնէք ձեր երազելու եւ զգալու կարողութիւնները:

14-Ամառը կախարդանք է: Առաւօտեան արեւածագին ու մայրամուտին գոյներուն հետ երազեցէ՛ք այն մասին, թէ ինչպէ՛ս կրնայ ըլլալ ձեր կեանքը: Աշխատեցէ՛ք այդ բոլորը իրականացնելու համար:

15-Պարզապէս լաւատես եղէ՛ք: Կեանքը ձեզի շնորհուած առիթ մըն է: Վայելեցէ՛ք զայն:

ԲԱՆԱՍԵՂԾԱԿԱՆ ԱՆԿԻՆ

ԻՆՉՈՒՒ



Ռուբէն Սեւակ

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, քեզի մե՛ղք էր.
Փոքրիկ ծոցիդ թիթե՛ռ պէտք էր,
Դուն ծե՛ր արծիւ մը բանտեցիր...

Ես կ'երթամ մի՛շտ, անծայրածի՛ր
Դամբաններ են ոտքիս հետքե՛ր.
Քեզ սիրոյ մեղմ սի՛ւք մը պէտք էր,
Դուն փոթորկի՛ն կուրծքդ բացիր...

Կապոյտ աչուերդ երբ որ բացիր,
Կապո՛յտ աղջիկ՝ պլպուլն երգ է՛ր.
Քե՛զ ալ սիրոյ մըմունջ պէտք էր,
Դուն գուժկան մռո՛նչս ընտրեցիր...

Կ'այրի՛ն աչերդդ սեւածիր,
Պիտի մեռնի՛ս, այդպէս մ'երգեր.
Քեզի փոքրիկ սեր մը պէտք էր,
Դուն Սէր-Աստուածը սիրեցիր...

Մարզական ՏԵՂԱԿԱՆ



Ռաֆֆի Սիլահեան

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ ֆութպոլի պատանեկան ախոյեանութեան աւարտին, Զալէ-պի Աիլին տիրացաւ ախոյեանութեան՝ աւարտական փուլի մրցումներուն պարտութեան մատնելով Զուրիէն 4 - 0 եւ Նաուաաիրը 1 - 0 արդիւնքներով:



- Սուրիոյ ֆութպոլի Դաշնութիւնը իր հերթական նիստով պատժական տնօրինում սահմանեց Լաթաքիոյ Թշրին ակումբի նախագահ Թարեք Չէ-նէին եւ օգնական մարզիչ՝ Այիամ Շիմալիին՝ զիրենք մէկ տարիով զրկելով դաշտ մուտք գործելէ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՌԵԱԼ ՄԱՏՐԻՑ ԵՐՈՊԱՅԻ ՍՈՒՓԵՐ ԳԱՄԱԹԻՆ ԱՐԺԱՆԱՅԱՄ

Սպանիոյ ախոյեան եւ ՉԵՄՓԻՐՆԳ Լիկի գաւաթակիր ՌԵԱԼ Մատրիտ տիտղոս մը եւս արձանագրեց իր ոսկեայ մատենին մէջ, տիրանալով Եւրոպայի Սուփըր գաւաթին:



Ֆինլանտայի մայրաքաղաք Զելսինքի Ռոյմաիական մարզադաշտին վրայ տեղի ունեցած խաղին, իտալացի Գառլօ Աւելլոբիի գըլխաւորած խումբը 2 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց «Իւրոփա լիկ»-ի յաղթող, գերմանական Այնտրախտ Ֆրանքֆուրթը:

37-րդ վայրկեանին, խաղին արդիւնքը բացաւ աւստրիացի պաշտպան Տեյվիտ Ալապան, որուն կողային փոխանցումը կատարեց պրագիցի կիսապաշտպան Գազիմերօն: Արքայական խումբի երկրորդ կողմը նշանակեց Ֆրանսացի Զարիմ Պենսեման, 65-րդ վայրկեանին: Զանդիպումին աստղը դարձաւ Ռեալի դարպասապահ Զորթուան: Սպանական ակումբի պատմութեան ընթացքին այս 5-րդ անգամն է, որ խումբը կը յաջողի ձեռք ձգել Եւրոպայի Սուփըր գաւաթը: Նախապէս տղն բաժակին արժանացած է 2002-ին, 2014-ին, 2016-ին եւ 2017-ին:

ՓԱՐԻՉ ՍԱՆ ԺԵՐՄԱՆ ՈՒ ԻԿԷՆԹՈՒՄԸ ԶԱՄԱՋԱՅՆԵՑԱՆ

Յառաջիկայ օրերուն Ֆրանսայի Փարիզ Սան Շերմանի կիսապաշտպան Լիոնարտօ Փարիտիս պիտի տեղափոխուի Իտալիոյ Իւլլէթթօս խումբ: Ֆութպոլի մասնագետ Ֆապրինիօ Ռոմանօ ըսաւ, որ զոյգ կողմերը համաձայնեցան պայմանագրութեան բոլոր կէտերուն շուրջ. մօտ օրէն ան պիտի միանայ իտալական խումբին: Ըստ իտալական մամուլին, Իւլլէթթօս պիտի վաճառէ Ատրիան Ռապին, որուն գումարով ան խումբին պիտի միացնէ Փարիտիսը:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 403)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1		■							■			
2						■						
3			■							■		■
4			■	■	■	■						
5										■		
6					■	■						
7		■				■	■					■
8				■								
9		■									■	
10								■				
11	■		■									
12						■			■			

Հորիզոնական

1. Ճոխ: Լեւոն Շաւրի Տրամաներէն. «..... Մարդը»:
2. Այս կերպով: Զակառակ՝ տարածքի միաւոր: Զին վերջի հետք՝ նշան:
3. Միջազգային կազմակերպութիւն մը: Զակառակ՝ ծաւալուն վնաս բերող կրակ:
4. Աղբիւր: (Շոքոլա):
5. Շէնքի կամ այլ գործի շինութիւնը ստանձնող գործակատար: Զակառակ՝ կրկին:
6. Գիւղաքաղաք: Գրաբար՝ օր: Զակառակ՝ տառի մը անունը:
7. 360: 420:
8. Յաւի ճիչ: Տառի մը անունը:
9. Ծափոնական թատրոն: Այրած:
10. «Պայքար» վեպին հեղինակը: Առարկայ:
11. Զակառակ՝ 9300: Ապրի:
12. Կիլիկիոյ քաղաքներէն: Զակառակ՝ կարմիր հատիկներով կոնաքեր ծառի տեսակ: Մաշած:

Ուղղահայեաց

1. Թղթատարական գրասենեակ:
2. Զիչ: Ահաւասիկ:
3. Գոց: Դակիլէ Վարուժան «Ձօն» բանաստեղծութեան մէջ կ'ըսէ. «Ու..... երգեցի, ձեզի ընծայ, հայ մարտիկներ» (տղն բառը երեք անգամ կրկնուած):
4. Անձնական դերանուն: Յարմար:
5. Բաղաձայն տառեր: Զաղցր:
6. Աղամի կողակիցը: Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «..... ըսածդ կլոր է, խորի՛է՛, վերջը գլորէ»:
7. Զիմա: Տառի մը անունը:
8. Պայքարելու տրամադիր: Իրերայաջորդ տառեր:
9. Դրախտային կին: Եական բայ:
10. Անձնական դերանուն: Չինուորը պահպանող ամուր գգեստ:
11. Արամ Խաչատուրեանի ստեղծագործութիւններէն: Անվերջնատառ՝ իգական սեռ:
12. Կրկնուած ձայնաւորներ: Անձնական դերանուն: Արագածոտնի մարզին մէջ գտնուող քաղաք:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 402)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	ա	հ	թ	ա	ռ	մ				լ	ի	մ
2		հ	ո	ր	ա	ք	ա	ք	ա	ք	ա	ք
3			յ		փ	ր	կ	ա	ք	ա	ք	
4		ա	ք	ա	ք	ա	տ				ա	ի
5	ա	կ			յ	ա	ն	ի				
6	ա	հ		ց	ա	յ	գ	ա	լ	ո	յ	ս
7		ո	ո		ո	խ				ո	լ	
8	բ	ո	ւ	ր	վ	ա	ռ		ա	հ	ա	
9	գ	օ	ք	է	ա	ն		ա	գ	ո	յ	ց
10	է		ա	ք	կ	գ		ա	ն	ի		
11	գ	ի	հ	ա	ն	ի		ա	ն	ի	ա	կ
12		լ	ա	ն	կ	ե	ի	ւ	ր		մ	

ԼՈՒՐԻՆ

Երկուշաբթի 22/8



23° 37°

Երեքշաբթի 23/8



23° 37°

Չորեքշաբթի 24/8



23° 37°

Հինգշաբթի 25/8



22° 37°

Ուրբաթ 26/8



23° 37°

Շաբաթ 27/8



24° 39°

Կիրակի 28/8



24° 39°

ՈՒՍՏԱԿՈՐՆԵՐՈՒ...

Մկրտիչ Էջ 1

կատարեց Բեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Ներկայութեամբ՝ Ազգ. Վարչութեան անդամներու, ազգայիններու, քեսապահայութեան եւ Սուրբիոյ շրջաններէն ժամանած հոծ բազմութեան:

«Չրաշափառ» շարականի երգեցողութեան Ներքոյ, Սրբազան Չայրոյ թափօր կազմած մուտք գործեց եկեղեցի:



Դպրաց դասի հոգեպարար երգեցողութեամբ հնչեց Աստուածամոր Նուիրում քաղցրահունչ շարականներ:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազան Չայրոյ փոխանցեց իր հայրական պատգամը: «Բեզի երանի պիտի տան բոլոր ազգերը» քննաբանով:

Մասիս Սրբազան աղօթք բարձրացնելով առ Աստուած, մաղթեց, որ Աստուածամայրը իր օրհնաբեր լոյսէն մեզի բաժին հանէ, որպէսզի լուսաւորուին սուրիական հայրենիքը, Չայրաստանն ու Արցախը:

Այնուհետեւ, ուխտաւոր ժողովուրդին յոտնկայս Ներկայութեան, Սրբազան Չայրոյ ընթերցեց Վեհափառ Չայրապետին սրբատառ կոնդակը, ուր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Չայրապետ ընդառաջելով Սրբազան Չոր խնդրանքին, եւ գնահատելով հայ եկեղեցւոյ անդաստանէն Ներս որպէս Կիլիկեան Ուխտի Միաբան Չոգչ. Տ. Անդրանիկ Աբղ. Զիրիւմեանին մատուցած ամբողջանունը ծառայութիւնը, Չայրապետական Կոնդակով Չոգչ. Տ. Անդրանիկ Աբղ. Զիրիւմեանին կը շնորհէ վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք: Սրբազան Չայրոյ այս առիթով լանջախաչ նուիրեց Չայր Սուրբին:

Պատարագի ակարտին, Մասիս Եպիսկոպոս Անթիլիասէն բերած Նորօրհնեալ Սրբալոյս Միւռնոնով Զրօրհնեք կատարեց, աղօթելով Ամենակալին, որ Սրբալոյս Միւռնի օրհնութիւնը անպակաս պահէ քեսապահայութեան եւ ուխտաւոր ժողովուրդին վրայէն:

Ապա, Սրբազան Չայրոյ «Ուրախ Լեր» շարականի երգեցողութեամբ եւ թափօր կազմած ուղղութեամբ դէպի եկեղեցւոյ շրջափակ, ուր տեղի ունեցաւ խաղողի եւ բլեղի օրհնութիւն, ՉՄԸՄ-ի տարագաւոր սկաւտներու Ներկայութեան: Ուխտաւորները միասնաբար «Կի-

լիկիա» մաղթեցող երգեցին, ապա ուրախ մթնոլորտի մէջ բարեմաղթութիւններ փոխանակեցին իրարու:

Չուսկ, Առաջնորդ Սրբազան Չոր հովանաւորութեամբ եւ ՉՄԸՄ-ի Սուրբիոյ Շրջ. Վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Ս. Աստուածածինի Վերափոխման տօնին Նուիրում ՉՄԸՄ-ի ակադեմիական տոհմանք՝ Չայլէպի, Լաթաքիոյ եւ Բեսապի մասնաճիւղերու փողերախումբերուն եւ սկաւտական կազմերուն մասնակցութեամբ:

Այս առիթով, իր սրտի խօսքը հանրութեան ուղղեց Առաջնորդ Սրբազան Չայրոյ, յայտնելով, որ Ազգ. Իշխանութիւնը, Ազգ. Առաջնորդարանը եւ Բեսապի Թաղականութիւնը գործակցաբար Բեսապի մէջ երեք օրերու ուխտագնացութիւն կազմակերպելով եւ զանազան շրջաններէն ժամանող ուխտաւորներու հոծ Ներկայութեամբ ցոյց տուին, թէ Սուրբիոյ ողջ տարածքին հայ համայնքը միասնակամ է եւ կառչած կը մնայ Սուրիական հայրենիքին եւ անոր հողերուն ամբողջականութեան: Այս առիթով ան երախտագիտական եւ շնորհակալական խօսք ուղղեց սուրիական բանակին եւ անոր վստմաշուք Նախագահ Տոքթ. Պաշշար Ալ-Ասատին, որ ինչպէս բոլոր սուրիացիներուն, յատուկ սեր կը ցուցաբերէ Նաեւ սուրիահայ համայնքին նկատմամբ:

Սրբազան Չայրոյ սկաւտական տողանցքին անդրադառնալով, գնահատեց ՉՄԸՄ-ի մեծ ընտանիքը, որ այսօրուան տողանցքով, երիտասարդներու հայաշունչ Ներկայութեամբ կը ծաղկեցնէ եւ կենսելու տայ մեր Նոր սերունդի զաւակներուն: Ան Նշեց, թէ ՉՄԸՄ-ը տառապանքին մէջէն ծնունդ առնելով, աքսորեալ հայ երիտասարդները համախմբեց մէկ դրօշի տակ, հայրենիք դարձաւ անոնց համար եւ հայկականութիւնն դրոշմեց Նորահաս սերունդին մէջ:

Սրբազան Չայրոյ ողջունեց մեծաթիւ ուխտաւորները, մանաւանդ այս առիթով Սուրիա ժամանող սուրիահայերը, որոնք իրենց երկիրները վերադառնալով քեսապահայութեան դեսպանները պիտի հանդիսանան եւ իրենց Ներդրումը պիտի բերեն:

ՉՄԸՄ-ի փողերախումբերուն «Ով Չայ Արի» քայլերգի նուագակցութեամբ, ապա Սրբազան Չոր «Պահպանիչ» աղօթքով պաշտօնական հաւաքը հասաւ իր ակարտին:

ԵՍԿԻՐԱՆԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՏՐԱՆ ՄԷՉ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ, ՄԱՏԱՐԻ ԵՒ ԲԿԵՐԻ ՕՐՆՈՒԹԻՆ

Ս. Աստուածածինի Վերափոխման տաղաւար տօնին առիթով, Մեռելոց Յիշատակի օրը, Երկուշաբթի, 15 Օգոստոս 2022-ին, հանդիսապետութեամբ Բերիոյ Չայրոյ Թեմի Բարեջան Առաջնորդ Գեղչ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Եսկիրանի Ս. Աստուածածին մատրան մէջ Բեսապահայութեան ակադեմիական համաձայն Սուրբ եւ Ամմահ Պատարագ մատուցուեցաւ:



Օրուան պատարագիչն էր Առաջնորդի Օգնական Չոգչ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեան: Ներկայ էր Նաեւ Բեսապի հոգեւոր տեսուչ Չոգչ. Տ. Անդրանիկ Աբղ. Զիրիւմեան: Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց Բեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասի երգչախումբը: Բեսապէն եւ Սուրբիոյ զանազան շրջաններէն մեծ թիւով ուխտաւորներ ժամանած էին Եսկիրան՝ աղօթք բարձրացնելու առ Աստուած եւ Աստուածամոր բարեխօսութիւնը հայցելու:

Չուսկ, Ս. Աստուածածին մատրան շրջափակէն Ներս, Սօսիի ծառին Ներքեւ, Առաջնորդ Սրբազան Չոր ձեռամբ կատարուեցաւ մատաղի եւ բլե-



ղի օրհնութիւն, որմէ ետք Չոգչեանգստեան Պաշտօն կատարուեցաւ համայն ննջեցելոց հոգիներուն խաղաղութեան համար: Սրբազան Չայրոյ Աստուածամոր բարեխօսութիւնը հայցելով աղօթք բարձրացուց առ Աստուած, մաղթելով, որ Ամենա-

կալին երկնառաք օրհնութեամբ սուրիահայութեան եւ յատկապէս քեսապահայութեան կեանքը առաւել ծաղկի եւ պայծառանայ: Յիշեցը, որ Բեսապի ակադեմիական համաձայն, տօնակատարութեան Նախորդող գիշերը մարմանդ կրակի վրայ մինչեւ լոյս առաւօտ մատաղ կը պատրաստուի, որուն ընթացքին քեսապիներ եւ Սուրբիոյ զանազան շրջաններէն ժամանած ուխտաւորներ կը համախմբուին Եսկիրան, միասնաբար պատրաստուելու մատաղը: Անոնք, տիկի ու գումշայի հնչեցուցած եղանակներով եւ ժողովրդային-հայրենասիրական երգերով մինչեւ լուսաբաց տօնական մթնոլորտ կը ստեղծեն:

Օրհնութեամբ մատաղն ու բլեղը բարեմաղթութիւններու փոխանակումով բաշխուեցան Ներկայ ուխտաւորներուն:



Աւարտին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ Թաղական Խորհուրդը, ի պատիւ Սրբազան Չոր, Բեսապի համալիրէն Ներս սարքեց սիրոյ ճաշ, որուն ընթացքին Բեսապի Չոգեւոր Տեսուչ Չոգչ. Տ. Անդրանիկ Աբղ. Զիրիւմեան խօսք առնելով քեսապահայութեան անունով բարի գալուստ մաղթեց եւ շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Չոր՝ իր հայրական հոգատարութեան եւ Ս. Աստուածածինի Վերափոխման տօնին Նուիրում ակադեմիական տօնակատարութիւնները Նախագահելուն համար:

Իրենց սրտի խօսքերը արտասանեցին Նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ասպետ» շքանշանակիր Տիար Սեպուհ Մանճիկեան եւ Չամազգայի Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Կարօ Մանճիկեան, որոնք իրենց շնորհակալութիւնն ու երախտագիտութիւնը յայտնեցին Սրբազան Չոր՝ իր հայրական հոգատարութեան եւ Ս. Աստուածածինի Վերափոխման տօնին բոլոր Նախաձեռնութիւնները հովանաւորելուն համար:

Մտերմիկ հանդիպումին, Սրբազան Չայրոյ իր սրտի խօսքը փոխանցելով գնահատեց Ս. Աստուածածինի Վերափոխման տօնին առիթով Բեսապի Թաղականութեան, Դպրաց Դասին, Տիկնանց յանձնախումբին եւ Բեսապի ազգային մարմիններուն տարած աշխատանքը: Ան շնորհաւորեց Բեսապի Չոգեւոր Տեսուչ Չոգչ. Տ. Անդրանիկ Աբղ. Զիրիւմեանը՝ Բեսապէն Ներս իր հոգեւոր ծառայութեան եւ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Չայրապետին տնօրինումով վարդապետական լանջախաչ կրելու իրաւունք ստանալուն համար:

Սրբազան Չայրոյ, կրկին անգամ շնորհաւորեց Չոգչ. Տ. Մանուկ Աբղ. Պարիխանեանն ու Չոգչ. Տ. Անդրանիկ Աբղ. Զիրիւմեանը՝ վարդապետական լանջախաչ կրելու պատիւին արժանանալու առիթով եւ Ազգային Իշխանութեան կողմէ իւրաքանչիւրին նուիրեց գեղեցիկ լանջախաչ մը: